

ԱՇՈՏ ՀՈՎՏԱՆՆԻՍՅԱՆ

ՔՐԻԿԸ

ՊԱՏՄԱՔՆՆԱԿԱՆ
ԼՈՒՅՍԻ ՏԱԿ



ԵՐԵՎԱՆ
1955

891.99(09)[Dpt4] 26775.

2-85 Հոկտեմբերյան, Ա.

Ծրվեց պայմանագրերի

համար: 20-904.

12/411

14





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

АШОТ ИОАННИСЯН

Ф Р И К
В СВЕТЕ ИСТОРИЧЕСКОЙ
КРИТИКИ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1955

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99.092 [Ֆրիկ]

2,

ՅՅՈՒԳՎԱՐ Է 1961 Ն.

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ՖՐԻԿԸ
ՊԱՏՄԱԹՆՆԱԿԱՆ
ԼՈՒՅՍԻ ՏԱԿ**

~~86725~~

A
6613



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՂՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1955

Տպագրվում է Հայկական ՄՍՌ Դիսուբյունների
ակադեմիայի Խ.Բաղդասարյան-Բրաժարսկիական
խոհեղի որոշմամբ:

Ֆրիկը պատկանում է միջնադարյան Հայաս-
տանի այն մարզկանց թվին, որոնց կյանքի
մասը իրիկնաժամը հանգիստնում էր նրանց
հուսառատ յուսաբացի հաշտպատկերը: Նա գուրս
էր եկել մոնղոլական շահաստաններում ել ու
մուտ ունեցած այն գործիչների շրջանից, որոնք
Չանքեր էին անում վեր բարձրանալ հասարա-
կական ազդեցության սանդուղքներով և անցո-
ղակի հաջողություններից հետո ավարտում
իրենց կյանքի ընթացքը էլխանների զնգանում
կամ մուրացիկի քսակն ուսած:

Շատ մի դատեցայ, եղբարք,
Ի Հարգայ ևս շատ մի տարի,
Ասցի թ'իմ ջանօքս առնեմ
Մեծութիւն՝ առանց հրամանի¹:

¹ Ֆրիկ, Դիվան, Նյու-Յորք, 1952, ԻԴ, 9—10: Հմմտ.
Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941, ՆՎ, 6—7:
Բնադրի վկայակոչումները անում ենք Ֆրիկի 1952 թ. հրա-
տարակությունից, ընթերցողի հարմարության համար նշե-
լով նաև 1941 թ. հրատարակության համապատասխան տե-
ղերը: Հայկական կամ հոռմեական թվանշանները սույն
տալիս բանաստեղծության համարը, իսկ արարականը՝
դրանցից քաղված տողերը:

Այստեղ բացահայտված է բանաստեղծին ժամանակակից հայ մեծատուններին¹, Ուսեկների, Շնորհալուրների ու Սահմագիներին դասը, երբ կայուն հարստության և անձնիշխան մեծության աղբյուր էր հռչակվում Կնովի կալվածքը և զբըն-
 փուն ոսկու բանալիով բացվում իշխանության:
 և վայելքի լայն դռները:

Նախ ու նասիճ իմ ճոխալուս,
 Զօհար շարեմ թագ իմ գըլխուս:
 Եինեմ դարդաս նախշուն ֆըսուս,
 Գեղ՛ւ աղարակ շինեմ ժամուս:
 Եստ մի ծառայ Դըփշախ Է Էոուս,
 Ժողովեմ բարիք տուն ւ ի դուրս:
 Լինիմ իշխան իմ ժողովուս²:

«Նախ ու նասիճը» մոնղոլ ֆեոդալների՝ նովին-
 ների կամ «նոյանների» հանգիստավոր հազուստ-
 կապուստան էր: Մի բանքում Ֆրիկը գրում էր.

Է՛ր ես հաղեյ դու նասիճ ու նըստեյ
 զինչ մէկ ի նըւին,
 Ճորտեր են կանգնած յառջևդ՝
 զբռավաշ զինին լընուին³:

Մեր բերած առգերում Ֆրիկը գծագրում էր
 դարգացած ֆեոդալիզմի շրջանում Հայաստա-
 նում իշխած ճորտատեր առևտրականների կամ
 առևտրական ճորտատերերի հասարակական իգե-

1 Դիվան, ԺԳ, 8—14; Հմմտ. Բանաստ., XV, 7—12:

2 Դիվան, ԼԶ, 34—35; Բանաստ., XXII, 27—28:

այլը, որին երիտասարդ իր տարիներին, ըստ
երևույթին, առատ առերթ էր վճարել նաև ինքը:

Հետագայում բանաստեղծը մտաբերում էր
այն հարստությունն ու վալսլէքները, որ ունեցել
էր երբևէ, և սրտնցից ի վերջս գրկվել էր՝ չհաս-
նելով «փառքի» ու «ալլ մեծության»:

Մի տեղ նա գրում է.

Լուկ վաղեցի հետ շատ շահի:
Զինչ աւրն երևա հերլէք չածի,
Ա՛յլ մեծութեան սիրտ ունէի...
Այն բողային և՛ նրմանի,
Որ փոքր սրսի ոչ հավանի՞:

Հարկավ, սրտը հաջողություն պիտի ունեցած
իներ բազի մեծ սրտը, որպեսզի «Ֆրիկ-սրտը-
յը չհավաներ «փոքր սրտին»:

Սակայն տփերվում է «Ֆրիկի երազը, չքանում
«բազար ու դարպասնի» կառուցելու նրա «ուս-
կու պընտրը»:

Ժողովեցի շատ մի բարի՝
Ըսդակ արի գինք թաթարի...
Ուսկայ եղաւ այնչափ տարի,
Որ տուն ու տեղ գեւ կու քակի,
Զինչ մեծամեծ վաստակ արի՝
Տանիլ տալի գինք հեղեղի:²

¹ Դիվան, Ը, 8—9 և 13: Հմմտ. Ռանատու, 1, 13—16
և 23—24:

² Դիվան, Ը, 10 և 15—16: Հմմտ. Ռանատու, 1, 17—18
և 20—30:

Ֆրիլի ստեղծագործությունները մեղ փոխա-
գրում են բանաստեղծի դարաշրջանը: Մի ժա-
մանակ էր այդ, երբ ադրաբային և խաշնարա-
ծային անտեսության կողքին նշանակություն
էին ստանում առևտրական ու ֆինանս կեամու-
ները: Պետական հարկերի ձև ստացած հողային
ռենտան իրացվում էր առևտրի համաշխարհա-
յին շուկաների հետ հանգուցավորվող քաղաքնե-
րում, վերածվում ալյուրանքի ու փողի: Քաղաք-
ներում կենտրոնանում էին գորքերի մատակա-
րարման, հարկահավաքման, հանքերի շահագործ-
ման, սկտական շինարարությունների հետ կապ-
ված կապալային և առևտրա-վաշխատուական
գործարքները, կրպակների, քարվանսաբաների,
ջրաղացների շինարարությունն ու մասնավոր
շահագործումը: Գյուղացիներից գանձվող բեռ-
տայից ու առևտրա-արդյունագործական շահույթ-
ներից զատ քաղաքներում կուտակվող հարստու-
թյան ազդեցությունը էին նկատվում ավարատու-
ները, հափշտակությունները, ստրկավաճառքը,
դեղձուհիներն ու կաշատքը: Չարաշահուհիներն ու
կեղևքուհիները կազմալուծում և քայքայում էին
քաղաքային անտեսության հիմքերը, վերարա-
գրում կամ նոր կազապարների մեջ մտցնում
անտեսության հին ֆեոդալական սխտեմը, առ-
լով նրան ավելի դաժան ու գիշատիչ բնույթ և
հանդերձ գյուղացիների ճորտացման, երևույթ
որ օրինական սանկցիա է ստանում 13-րդ դարի

կեսերից՝ Հուլիոս և Հագան էլխանների ժամանակներից ի վեր:

Հասկանալի է, որ այս ամենը պիտի քայքայեր մասսաների բարեկեցությունը, կասեցնէր նրանց դասակարգային ղեմադրութեան ընթացքը, նախապայամաններ ստեղծելով ներքին ու արտաքին աշխարհի աղետների ու պատուհասների համար:

Ֆրիկի անձնական բարեկեցությունը նույնպէս զոհ էր դարձել նման մի աղետի կամ պատուհասի: Վերը, ինչպէս տեսանք, իրեն հանդիպած այդ աղետը կամ պատուհասը նա համեմատում էր «հեղեղի» հետ: «Կուգես որ աղիս կենաս» բանքում բանաստեղծն իրեն հանդիպածը ներկայացնում էր այս պատկերով.

Ես ան հաւերուն էի, որ գետինքն

կուտ չուէի

Թըռչի, երկնաւքն անցնէի,

թէ սիրուն՝ ակնատ չընկնէի,

Ակնատն ի ծովուն կըղղին լարած էր

է՛ ես չդիտէի,

Ամեն հաւ ոտօքն ինկեր,

Ես ոտաւքս ու թեւ ավելի՛:

Ստորն այն մտտին չէ այստեղ, թի ֆրիկի վտատակն ու ինչքը «ավար» կամ «կեր» (ընդակ) էր դարձել թաթարական ավարառումների, հարկահանումների կամ հարկահանների

1 Դիվան, ԽԳ, 23—26:

երեսից պարսատերերի ձեռքն ընկնելու պատճառով, ինչպես կարծել և կարծում են մինչ հիմա¹:

Մի տեղ ինքը բանաստեղծը պարզ նշել է իր պոեմախառնիթյան բուն պատճառը՝ թաթարական «մասան» ու «մասասչխուխուենը»:

Գեմ չի մընաց աղբիւր ու գեա,
Որ լացուցածքքս չի խմեցին,
Գեմ չի մընաց լեաներ ու դաշտք,
Որ մասասչիքքն չկոխեցին:

Ձրմեան առան՝ յերթին լալով
Ի՛ մմանն ի քոչքն խաչէին,
Քրսան տարի դար քաշեցար,
Որ հալեցաւ սսկր ու մարթի²:

Բանաստեղծն աշտեղ տկնարկում է այն տասասպանքները, որ կրել է քսան տարի շարունակ «մաստախ» և «մասասչիների» կապակցությամբ, բոտ երևույթին ինքը ևս մաշած լինելով մոնղո-

¹ Տես Տիրալյրի «Մասացված մի երգիչ» հոդվածը, «Կրարատ», 1918, եր. 82 և «Դիվան»-ում գեակոված նրա սուսուսնասիրությունը: Նույն անսակետը կրկնված է նաև Մ. Արեղյանի «Հատուց հին գրականության պատմության» մեջ, Երևան, 1916, եր. 252, և պրոֆ. Ա. Գ. Արրահամյանի Փրիկի «Դիվանի» հրատարակության տարիվ գրված «Գրախոսական»-ում (առանձնատիպ շեջմիտմին» ամսագրի 1951 թվականի հունվարի համարից, եր. 3):

² Դիվան, լե, 64—71: Հմմտ. Բանաստ., XXXVIII, 63—70:

լական ձմեռանոցների (Շառանիք) և ամառանոցների (Շքսչիք) ճանապարհները:

Աւուրքս անցաւ հետ մասասիս

Եզբբ չի կայ, հուն չերեին:

Ցաւս երկարեց, 'ւ ի յսկը անցաւ,

Այլ չի մնաց համբերութիւնը:

1

Ֆրիլի մոտ հանգիւղով դժվարիմաստ բառերից ոչ մեկը այնքան չի զբաղեցրել նրա կյանքն ու սակցձագործությունը նեաադատողներին, որքան «մասաս» և «մասասչի» տերմինները: Ֆրիլյան «Դիվան»-ը կազմելու գործով զբաղված բանասեր Տիրայրը տակալին 1918 թվականին հրատարակած իր հոգվածուս¹ ավել է այդ տերմիններին իր բացատրությունը, սրը կրկնել է նաև 1952 թվականին լույս ընծայած «Դիվան»-ին կըցված «Քննական ուսումնասիրության» մեջ:

Տարիների ընթացքում «Դիվան»-ի կազմողը խնամքով ընդօրինակել կամ ուրիշ բանասերների ձեռքով ընդօրինակել է ավել Բրիտանական մատենագարաններում, Վենետիկում, Վիեննայում, Երուսաղեմում, Էջմիածնում (ներկայիս՝ Երևանում) և այլուր գտնված ֆրիլյան տալիւրը, բանաստեղծի գիտականորեն մշակված

¹ Դիվան, Լե. 184—187, Հմմտ. Բանաստ., XXXVIII, 131—184,

² Տես «Արարատ», 1918, հր. 196 և հտ.:

ընագիրներ կազմելու և դրանք ընդհանուրի սեփականութիւնը պարձնելու համար¹։

Դժբախտաբար, «Դիվան»-ի շքեղ արտաքինի և նրա մատակարարած ֆրիկյան հարուստ տեքստերի ու տարբերակների հետ հակառակ հարաբերութեան մեջ են նրան կցված ընդարձակ «Քրննական տ.սու.Մնասիրութեան» պատմա-բանասիրական ջածր մեկաբարդին ու, մանավանդ, մեթոդոգիական և գաղափարաբանական կազմուկի ուսումնասիրութեան մեջ Տիրաջըր ոչ միայն համառոտ են կրկնում է, այլև յարովի «խորացնում» իր մի շարք սխալ գրույթները, որոնք առաջ էր քաշել դեռ 1918 թվականին իր հոգովածում և լուրջ առարկութեաններ շանդիպել ֆրիկի կյանքն ու գործը քննաբար հետազոտող հեղինակների, և հասկապես, Մ. Աբեղյանի կազմից։ «Դիվան»-ին կցված առաջաբանում արված սխալ լուսարանութեաններ իմուշ կարող են ծառայել մասնավորապես այն գիտողութեաններն ու հա-

¹ Որչափ ֆրիկի անունով մինչ այժմ հրատարակված ժողովածուները հիմնականում կազմված են եղել Տիրայրի անտիպ աշխատութեան սկզբնաղբի մատակարարած նյութերի հիման վրա, նոր հրատարակութեանը հանդես գալուց հետո, դրանք գրեթե կորցնելու են իրենց նշանակութեանը, որոշ արժեք սահմանելով միայն նրանով, որ սարունակում են մի երկու տաղեր, որոնք մատչելի չեն եղել «Դիվան»-ը կազմողին, կամ նրանով, որ առանձին գեղերում տալիս են ավելի հաջող ընթերցվածքներ, քան առաջաբանում է «Դիվան»-ի կազմողը։

յացքները, որ արժարժում է Տիրայրը «մասասի»
և «մասասչիների» մասին:

«Հանձին Փրիկի,— գրում է նա այդ առաջա-
բանում,— ունենք ազգային գիտակցություն և
ոգի զարգեցնող մի քնքուշ երգիչ, համոզված
մի քարոզիչ գաղափարների, որ մի հակընթաց
շարժում ու մղիչ հոսանք էր ստացել յուր ժա-
մանակակիցների մտքի ու սրտի մեջ, մի շրջան
երբ և սրտեղ ամեն ինչ, որ հայ անվան ու գա-
ղափարի հետ էր կապված — այդ ամենը ջնջե-
լու, սաքի տակ տալու և բնդմիշտ ավերելու
մի բուռն ձգտում կար, երբ թաթարն իր ելու-
զակի բնության և բնածին անքաղաքակիրթ
բնազգին զո՛հ էր բերում, գարավոր մաքառումի
հաղթանակ քաղաքակիրթության պտուղներ տված
և այդ պտուղները վայելող մի ամբողջ ազգի...
ստացվածք»¹, Ելնելով պատմական տրագիցիոն և
պրիմիտիվ այս ըմբռնումից՝ «Դիվան»-ի կազ-
մողը փորձում է գիտել «մասաս» և «մասասչի»
բառերը որպես քաղաքակիրթ հայերի և «բնա-
ծին ելուզակների» հավերժական պայքարն ար-
տահայտող կզրերի հակադրություն: «Արդյո՞ք,—
հարցնում է նա,— Մասաս մի բնդունված պայ-
մանական անուն չէր «հայ» գաղափար արտա-
հայտող և դորա հակադրությունը մասասչիք
արտահայտության մի ձև՝ «ոչ հայ, օտար» գա-

¹ Դիվան, եր. 105:

զափարի մի նշան»¹, Իւր թե՛ Ֆրիկը յաւրայրել էր «Մասաս» մականունը, հակազրվելով հայամերձ «մասասչիներին» և կամենալով շեշտել, որ ազգային իր ոգուն հավատարիմ ինքը գրել է «հայերեն բաներ», «հայերեն մասալ ստակներ»...²:

«Դիվան»-ի վերջում գեակոված բառարանում, կրկնելով իր միտքը, «մասաս» տերմինի մասին Տիրայրը գրում է. «Բառիս ծագումն անհայտ է, սակայն ենթադրում ենք, որ նշանակում է՝ խթանող, ծակող, անհանգիստ, դյուրսով չհամաձայնող», իսկ «մասասչիքը»՝ նշանակում է՝ ոչ-հայ, օտար լճնամի՛:

Մերժելով բանասեր Տիրայրի՝ սկզբից և եւ՛ր արհեստական ու բռնաձիգ նկատված՝ այս բացատրությանները՝ Մ. Արեղյանը փորձեց առ «մասաս» և «մասասչի» տերմինների նոր մեկնարանություն: «Ըստ գործածության, — գրում էր Արեղյանը, — այդ բառը նշանակում է իշխանավոր, կառավարիչ, վերակացու, պաշտոնյա, իսկ «մասաս»՝ իշխանություն, կառավարություն (թաթարական), վերակացություն, գաւցե և կա-

¹ Դիվան, հր. 102:

² Դիվան, հր. 102 և հտ.:

³ Դիվան, հր. 662 և հտ.:

⁴ Տե՛ս. Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն ի «Հովտափ Սերաստացի» հոդվածը, «Արարատ», 1918, հր. 253:

գոսպառում կամ նրանց նման մի բան»¹։ Չգտնել-
 լով «մաստա» և «մատուռչի» տերմինները ստույգ
 լմատարը, Արեղյանը կամենում էր նշմարել
 գրանց մեջ մտնող կեղեքումներն ու կեղեքիչ-
 ներին։ Արդունին թշնամացած «գավաղիրների»
 նկատմամբ Ֆրիկի տածած քաղաքական հակա-
 կրանքը նա ևս բացատրում էր հայ-մտնողական
 սոցալին հակամարտի տեսանկյունով։ Արեղյա-
 նի տեսագաշախց անհետանում էին անցքերի
 ասցիալ-գասակարգային հարաբերու թյունները,
 ասվերարկվում հայ սպատագրական «արաքին
 մաքառման» ճակատներին զուգահեռ արծարծ-
 վող պայքարի ներքին ճակատները։ Ճիշտ էլ էր,
 բացի այդ, գիտնալանի կարծիքն այն մասին,
 թե արտնջալով մասասի հեռ կապված շարա-
 կրու թյունների մասին, Ֆրիկը նկատի ու-
 ներ այն դաժանու թյունները, որոնց ենթարկվե-
 ցին հայերը թաթարական արապետու թյան
 սկզբնաշրջանում կամ այն հալածանքները, որոնք
 ձեռնարկվեցին հայերի գեմ՝ վրաց Գավիթ թագա-
 վարի, Անիում նասող Չաքարեի, Սաչենի Չալայ
 Գուլեի և Արդուն բասիակի միջև տեղի ունեցած
 պայքարի հետևանքով։ Սակայն փաստեր չու-
 նենք պնդելու, թե «մատուռ» հանդիսանում
 էր լայն շարաշահումների աղբյուր տակավին
 թաթարների արապետու թյան այդ մասա-
 նակաշրջանում։ Ճիշտ այդպես նաև փաստ

¹ Մ. Արեղյան, Հայոց հին գրակ. պատմ., 11, եր. 262:

չկա այն մասին, թե 1260 թվականից հետո և մինչև 1289 թվականը, երբ գրի առնվեց Ֆրիկի «Վասն Արղուն գանին և Բուղային» քերթվածքը, հարատևել էր բառակալ Արղունի ժամանակ Անդրրիտիկառում տարված հալածանքի քաղաքականութունը: Ինչպես պիտի տեսնենք, Արեղյանը ոչ միայն չի կարողացել ճիշտ բացատրել «մասաս» կամ «մասասչի» տերմինների իմաստը, այլև գրա հեռեանքով ոչ ճիշտ պատկերացում է կազմել Ֆրիկի կյանքի ու նրա ստեղծագործության կարևոր մի շարք մտտիվների մասին:

Եթե նախընթաց բանասերները ջանում էին բացատրել «մասաս» և «մասասչի» տերմինները՝ բռնելով բանասիրական վրիպող կահումներն ուղին, վերջերս փորձ եղավ մերձեանալ հարցի լուծմանը «մասաս» և «մասասչի» բառերի ստուգարանական պարզարանման միջոցով: Պրոֆ. Ա. Արրահամյանի կարծիքով «մասասը» պարսկերեն «moasas» բառն է և նշանակում է՝ գործ, ձեռնարկ, նպատակադրում, իսկ «մասասչի»՝ «գործակալ» և հատկապես՝ «մոնղոլական հարկեր հավաքող գործակալ»¹: Թե որքան ճիշտ են այդ բացատրությունները, թողնում ենք, որ վճռեն իրանագետներն ու մոնղոլագետները: պիտի համենայն պես պիտենք, որ եթե նախորդներից մի քայլ

¹ Տես պրոֆ. Ա. Արրահամյան, նշված տեղում, եր. 4:

առաջ գնալով փորձ է արվում հայտ բերել «մաս-
սաս» բառի սկզբնական կամ ընդհանուր իմաստը,
այնուամենայնիվ, այդ եղանակով ևս չի գրե-
վորվում հատուկ այն նշանակութունը, որպիսին
«մասսաս» կամ «մասսասչի» բառերը ստացել էին
մոնղոլական պետութւյան մեջ: Հիմնավորված չէ
մասնավորապէս այն պնդումը, թե մասսասչի
տերմինը հասկապէս նշանակում էր «մոնղոլա-
կան հարկեր հավաքող գործակալ»: Այս բացատ-
րութւյունը հիմնավորելու փոխարեն պրոֆ. Ար-
րահամյանը կրկնում է իրենից առաջ եղած
ուսումնասիրողների սխալը. նա ևս խոսում է թա-
թարական սեմիոմի կամ թաթարական հարկահա-
նումների մասին ընդհանրապէս, առանց մերձե-
նալ՝ կոնկրետ այն անցքերին ու իրողութւյուն-
ներին, որոնցով պայմանավորված էր Ֆրիկի
կյանքը կամ որոնք օգնել կարող էին մեզ՝ լու-
սարանելու նրա այն ապրումները, որոնք ցայ-
տուն հետքեր են թողել նրա գրվածքների մեջ:
Ըստ պրոֆ. Արրահամյանի, Ֆրիկի՝ «Աւուրքս
անցաւ հետ մասսասի» տողը նշանակում է.
«Օրերս անցան իմ ձեռնարկների, գործերի, իմ
կրօնանքի հետ միասին»: Այս մեկնութւյունը չի
կարող բացատրել մեզ, թե ինչո՞ւ մեջբերված
տողից անմիջապէս հետո բանաստեղծը տրտըն-
ջում է այն մասին, որ մասսասի հետևանքով ին-
քը կորցրել է իր եզրն ու հունը կամ որ՝ մասսա-
սի պատճառով իր ցաւը երկարել է ու անցել

6613



հայտնած այդ բաղձանքին: Սակայն, թող ներվի մեզ, եթե ձեռնարկելով այդ փորձին՝ հարկադրված լինենք մասամբ հենց այդ տերմինների պարզարանուծթյան լույսի տակ վերաքննել Ֆրիկի բովանդակի կյանքն ու գործը և վերանայել մեկի ու մյուսի մասին ստեղծված մի շարք սխալ պատկերացումները, այդ թվում նաև Արղունի տված մի շարք սխալ բացատրությունները:

II

«Մասասչիների» և «մասասի» մասին տվյալները հանդիպում են Ֆրիկի «Վասն Արղունի գանին և Բուղային» վերնագրած քերթվածքում: Բուղան կենտրոնական այն անձն է, որի պատճառով կամ որի վարչության ժամանակ էլխաններին հպատակները ենթակա են եղել «մասասի» հետ կապված զրկանքներին:

Առաջ էր քաշվել Բուղան և էմիրներին էմիրի կամ հեծերազորի բեյեր-բեյի դիրքի հասել էլխան Արաղայի ժամանակ¹, Երբ Արաղայի գահաժառանգության շուրջը գժտություն առաջացավ նրա մերձավորների՝ Ահմեդի և Արղունի միջև՝ Բուղան թեքվեց վերջինիս կողմը: Գրավելով էլխանների գահը (1284—1291)², Արղունը վստահեց Բուղային պետության վարչական զե-

¹ Рашид-ад-дин, Сборник летописей М.—Л., 1917. III, кр. 92 և 101:

² Նույն տեղում, կր. 99, 107 և 110:

կը, տալով նրան բացառիկ լիազորություններ¹: Շահագործելով այդ վստահությունը ի վնաս Արղունի, շնորհազրկված Բուզան, ի վերջոս, գաւազարություն է սարքում էլխանի գեմ: Իսլազորությունը ձախողեց և 1289 թվականի սկզբին ավարտվեց Մուզանի դաշտում Բուռի մօտ, Բուզայի գլխատումով և նրա գործակիցներին՝ Արուխի և Ջալալէգգիինի մահապարտությամբ²: Այս կապակցությամբ էլ գրվել է «Վասն Արղուն զանին և Բուզային» քերթվածքը:

Անգրադաւանալով Բուզային վերաբերող անցքերին՝ Ֆրիկը շէր դատում իրրև կողմնակի մարդ, ի լրոս, հետվից, այլ գրում գեպքերի թարմ տպավորության տակ, եռանդով պաշտպանում Արղունին և նշավտիում ըմբոստացած նրա գորավարին.

Դու քան զԱրղունըն չիր պահաս,
 Ի քո յահէդ խիստ կու վախին:
 Բուզա էիր՝ շինքսան ևղար,
 Բեկլար բէկի իր հեծելին,
 Չղխեմ, թէ գինչ կամիր լինել,
 Դու չիր որդի Չանկըզ զանին³:

¹ Р а ш и д - а д - д и н , 114:

² Նույն տեղում, 111, 119 և հտ., Հմմտ. Օրբեկեան Պատմութիւն տանն Սիսական, Թիֆլիս, 1912, էջ 130, և Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ., Երևան, 1951, հ. 1, եր. 17 և հտ:

³ Դիվան, ԼԵ. 26—31. Հմմտ. Բանաստ., XXXVIII, 25—30:

Սակայն, ըստ էութեան, Արդունի դատը չէ սոսկ, որ պաշտպանում է նա Բուդայի դեմ: Բուդայի դեմ նա հրապարակ էր հանում իր և իր գործակիցների— «օրթախներին»—դատը, և այս կապակցութեամբ էլ հենց՝ խոսում «մասասին» և «մատասչիններին» մասին:

Ի՞նչ է «մասասը» և ովքեր են «մատասչինները», և ի՞նչ «օրթախներին» մասին է այստեղ խոսքը:

Պատմելով Արաղա-խանի և սրան հաջորդած Ահմեդի ժամանակ պետութեան բարձր պաշտոնակալների ու վեզիրների չարաշահումների մասին՝ էլխանների պատմագիր Ռաշիդ-ալ-դինը մանրամասն նկարագրում է «նազմահանդերձման» և «մեսեսին», այսինքն՝ նույն «մասասին» պրակտիկան: Յուրաքանչյուր քաղաքում և մարզում,—ասում է նա,—կային պետութեան հետ կապված մատասչինների ընկերութեաններ, որի անդամները— «օրթախները» — տարեկան որոշ քանակի գենք (տղեղներ, նեաեր, կապարճներ, սուսեր) և ձիեր պիտի մատակարարեին ռազմական վարչութեանը: Ռազմական վարչութեան կողմից մարզերի ֆինանսական գիվաններում ծառայող քարտուղարների (բիթիկչիներին) անունով ուղարկվում էին համապատասխան «բարաթներ» (մուրհակներ), հրամանագրեր, որոնց հիման վրա կատարվելու էին մատակա-

րարուհիների վճարուհիները¹։ Օրթախները պետու-
թյան և ֆեոդալների հետ կապված առևտրական
ընկերություններ էին։ Նրանց միջոցով էին պե-
տությունն ու ֆեոդալները ներգնում իրենց մի-
ջոցները կարավանային և ծովային մեծաքանակ
առևտրի մեջ։ Նրանք ոչ միայն ապրանք էին
մատակարարում պետությանը, այլև շահեցնում
նրա բաց թողած գրամները²։ Վրացական մի
աղբյուրի համաձայն՝ օրթախները վարկ էին
մատակարարում փողով կամ վալյուտային ապ-
րանքներով³։ Վարկ բաց էին թողնում նրանք
ինչպես պետությանը, այնպես նաև խոշոր ֆեո-
դալներին։ Նրանք զբաղվում էին ոչ միայն շար-
ժական ապրանքների, այլև հողի վաճառքով։

Սակայն «մասախ» նկատմամբ Ֆրիկի արը-
տունջներին խելամուռ լինելու համար օրթախ-
ների բոլոր գործառնություններից առավել

¹ «Բիթիկչիներին» մասին տես. В. Греков и А. Якубовский, Золотая Орда и ее падение, М. Л., 1950, էջ 131 և հտ.։

² Тизенгаузен, В. Г., Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, М.—Л. 1911, II, 303. И. П. Петрушевский, Феодальное хозяйство Рашид-ад-дина (տե՛ս «Вопросы истории», 1951, № 4, էր. 102)։

³ Տե՛ս В. Дондуа, К соц. экономической жизни средневековой Грузии по Анийской надписи (1218) Епифания (Сборн. Акад. наук СССР, М.—Л. 1937, էր. 655)։ «Օրթախների» կամ «արթախ»-ների մասին տե՛ս նաև В. Греков и А. Якубовский, նույն տեղում, էր. 153 և հտ.։

ուշագրություն պիտի գարձնել հրանց ձեռքով
կատարվող սաղմական մատակարարումներին:

Քանի զեռ չէր գոցվել մանուկական արշա-
վանքներին ժամանակաշրջանը, սաղմական մա-
տակարարումները կենսական առաջնահերթ նշա-
նակություն ունեին էլիտանների համար և զին-
վորական վարչությունը հետամուտ էր մաստախ
կանոնավոր կազմակերպությանն ու գործառնու-
թյանը: Հետագայում, երբ արտաքին նվաճում-
ները կանգ առան, ասպարեզ տալով ֆեոդալա-
կան ներքին կռիվներին և կախազանի կամ թույ-
նի օգնությամբ գլուխ բերվող զինաստիական
գավազրություններին, մաստախ գործը գարձավ
ֆինանսական չարաշահումների միջոց, որից
լայնորեն շահվում էին, մանավանդ, էլիտան պաշ-
տոնակալներն ու վարչապետները:

Բուզայի զինվորական վարչության ժամա-
նակ բարաթների միջոցով կատարվում էին ահա-
վոր չափերի հասնող ֆիկտիվ գործարքներ: Մա-
սասջիների ձեռքում կենտրոնանում են սնաշ-
խատ հարստություններ: Չմատակարարված զեն-
քերի և ձիերի գլխաց հրանք կազմել էին տա-
լիս կեզծ ստացականներ առ այն, թե, օրինակ,
այսինչը հանձնել է հազար ձեռք լիակատար
զենք ու զրահ և այսքան-այսքան կատար ձի:
Այդ ստացականները հրանք ներկայացնում էին
տերության բիթիկչիներին, որոնք, լավ տեղյակ
գործի հանգամանքներին, ստիպյալ լուծյան հա-

մար վարձատրված՝ յառլիկ ու բարաթ էին դուրս գրում մասասչինների համար¹: Ռաշիգ-ազ-դինը դժագրել է հասն Գմասասչիններին՝ դեր ստանձնած օրթախներին կենցաղն ու բարքերը: Նրանք խմբում էին իրենց շուրջը «լուսապեմ զօլամներ» և բազմաթիվ «սերհենգներ» (թիկնապահներ), հարուստ հանդերձանքով նստում շքեղսրեն թամքամ Գսրիներին և ուղտերի վրա և հանդիսավոր շարժվում գեղի մեծ քաղաքներն ու բազմամաս շուկաները: Մարդիկ զարմացած հարցնում էին. «Որտեղից և ինչպես է այդքան արագ նրանց ճանկն ընկել այդքան հարստութուն»²: Պատմագրի ասելով, սրանց օրինակը վաբակիչ էր անգամ քիչ միջոց ունեցող մարդկանց համար. հարստանալու մարմաջով բռնված՝ շատերը պարաք էին վերցնում վաշխառուներից և, կաշտակելով ում հարկն է, ձեռք ձգում ստացականներ ու բարաթներ, և հարկավ՝ ջանում սաղացնել գրանք գարձյալ նույն եղանակով:

Էլիսանական պետության վարիչները շատ լավ տեղյակ էին այս չարաշահումներին. սակայն հանցավոր անդիտացումը այստեղ ևս ոչ միայն խրախուսում էր չարաշահումները, այլև եկամտաբեր հորդարուխ աղբյուր ծառայեցնում այլևայլ կեղեքումների համար³: Այսպես, հայկական ազ-

¹ Рашид-ад-дин, III, 267 և հա.:

² Նույն տեղում, III, 289 և հա.:

³ Նույն տեղում, III, 288:

յուրնեքում Շամս-սադ-դին Մուհամեդ Ջուլիյնիի
 մասին, որ իր պաշտոնի անուշով պարզապես կոչ-
 փում էր՝ Սահիր-Դիվան՝ էլխանների պատմագիրը
 հաղորդում է, որ, մերժելով չափ ու սահման հեգնող
 ֆիկտիվ յարաթների բավարարումը՝ նա խոստա-
 ցավ գոհացնել մասասչիններին միայն 20 տոկոսի
 սահմաններում. պայմանով, որ ստանալիք գու-
 մարների կեսը, ի վարձատրութ յուն աջակցութ յան՝
 մնար իրեն: «Մասասչինները» համաձայնում են,
 բայց Սահիր-Դիվանը չի կատարում պայմանը.
 յուրացնելով գանձարանից գուրս գրված կան-
 խիկ գրամբ և վճարում է օրթախներին հասնելիք
 բաժինը իր խիկ կալվածքների բերքերով, որոնց
 դինը չէր բռնում անգամ խոստացած գումարի
 քառորդ մասը¹: Այնուամենայնիվ, Սահիր-Դիվա-
 նի ընթացքը խրախուսում էր «մասասչիններին»,
 և երկրում սկսեցին լեռնանալ կեղծ ստացական-
 ների և բարաթների կույակեր: Ինքը Սահիր-Դի-
 վանն իսկ ընկել էր ի վերջո անել կացութ յան
 մեջ: «Մասասչիններից» մեկին նա հարցրեց մի
 անգամ. «Ինչքան է հասնում քեզ», պատասխանի
 փոխարեն վերջինս գրեց նրա առաջ հինգ հար-
 յուր թումանի բարաթ ու յառլիկ: «Թավրիզում
 տուն ունի՞ս»,— հարցրեց դարմացած Սահիր-Դիվա-
 նը: «Ունիմ»,— եղավ պատասխանը: «Մեծ է տունդ,
 լին՞ փոքր»: «Փոքր», պատասխանում է բարաթա-
 տերը: «Եթե քո տան կտուրը բարձրացնեն հինգ

¹ Рашид-ад-дин, III, кр. 288:

հարյուր թուամանը և երթիկից ներս թափեն, կտեղավորվի՞, թե ոչ»։ Պահանջատերը խոստովանեց, որ չի տեղավորվի¹։ Ֆինանսական սխառտի կազմալուծումը սրում է, մանավանդ, մասսաչինների և նրանց վարկատուների հարարերությունները։ Վաշխառուները չեն կարողանում հետ ստանալ նրանցից իրենց սոկիներն ու տոկոսիքը։ Տիրող իրավունքի ուժով՝ պարտապան ամասասչինների» օրթախները ոչ միայն անձնապես, այլև նրանց կանայք ու գավաղներն իսկ գառնում են պարտատերերի շղերիները կամ ստրուկները²։ Թե աշխատավոր ժողովրդի հաշվին այս կամ այլ ճանապարհներով ինչ հարըստության տեր էին գառնում պետության զլուխ կանգնած հարստահարիչները՝ գրան ցայտուն օրինակ կարող է ծառայել հենց Սահլը-Գիվանը, որի տարեկան եկամուտը, ըստ պատմագիր Համգալլահ Ղադվինիի՝ հասնում էր 365 թումանի։ Եթե նկատենք, որ նույն հեղինակի տակավ չուլավյան պետության ամբողջ տարեկան եկամուտը կազմում էր 1700 թուման, գուրս կշա, որ նրա եկամուտը, ամբողջ պետության եկամտի 20 տոկոսից պակաս չէր³։

1 Р а ш и д - а д - д и н, III, к р. 269:

2 Նույն տեղում, կր. 290:

3 *Տես* И. П. П е т р у ш е в с к и й, Городская знать в государстве Хулагидов, *Տես*. Советск. востоковедение, т. V. կր. 98:

Իր աված տեղեկություններով Ռաշխդ-ադ-գինը տկամա նշանակելից ծառայություն է մատուցում հայ բանասիրությանը: Նա բարձրացնում է Ֆրիկի կենդանի: կերպարը ծածկող թանձր քողը և միաժամանակ հանձնում մեր ձեռքը պատմական այն շիֆրը, որի օգնությամբ դյուրանում է նրա թերարաց Քրիվանս-ի վերծանումը:

Սոսելով քսանամյա իր տառապանքի մասին, Ֆրիկն աչքի առաջ ունի պարզապես 1269—1289 թվականների «մասսախ» հետ կապված տագնապակից այն իրադարձությունները, որոնց նկարագրությունը հանդիպեցինք Ռաշխդ-ադ-գինի մաս:

Հիրավի, որա աված բացատրություններից հետո կարգացեք վերը բերած «Գեմ չի մնաց ադրյուր ու գեա» կամ «Աւուրքս անցաւ հեա մասսախ» տողերով սկսվող մեր բերած կոչումները, և ձեզ կպարզվեն բանաստեղծի կենսագրության մի քանի մութ էջերը ու կըմբռնեք նրա գիրքավորումը՝ Բուղայի անկման առթիվ:

Ռաշխդ-ադ-գինը բացահայտորեն չի նշում Բուղայի և մասսաչիների առնչությունները: Սակայն ամբողջ նրա շարագրանքից և, մանավանդ, Ֆրիկի քերթվածքից ակներև են դրանք: Մասնավորապես Ֆրիկը հավաստում է Ռաշխդ-

ադ-գինի, Օրրելյանի և վրաց պատմագիրների
տված բացատրական բնութագրումները Արղունի
կողմից մահվան գատապարտված «բազմահնար»
Սահիր-Դիվանի մասին:

Սահիւղ զիւանին տսենք,
Որ մըլքեց զերկիր նա բոլոր,
Հանցեց սիառաթ ունէր,
Որ շուներ ոչ ոք թագաւոր:
Ձինչ որ խանորայք կային՝
Յափն ունէր, զինչ ըզմի խընձոր.
Փալաքն երբ է սիրտ ելաւ,
Նայ արար զինքն երկու կըտոր՝:

Փրիկն ուղում էր հալատալ, թե անարգար
գործի համար էր հենց աստված պատուհասել
նաև մասառչիներին:

«Մեղաւք զաստուած բարկացուցին», — ասում
է նա մասառչիները մասին¹:

Եվ ապա.

Հանց խարզանաւ տէրըն ձեծեց,
Որ չիմացան զինչ գործեցին²,

գրում է բանաստեղծը, աչքի առաջ ունենալով
մասառչիներին: Փրիկը գիտակցում էր, թե վեր-

1 Դիվան, Իէ, 29—34: Հմմտ. Բանաստ., XXXIX, 50—
57:

2 Դիվան, Լե, 123: Հմմտ. Բանաստ., XXXVIII, 120:

3 Դիվան, ն. տ. 128.—129: Հմմտ. Բանաստ., նույն տե-
ղում, 125.—126:

Չին հաշվով ում գլխին պիտի պայթեր մասասի
բերած ազկուր:

Ապա զայս այլ կամիմ ասել,
Զինչ մասասչիբքն գործեցին:
Խիստ յուսացան ի յանցաւորս
Եւ պարծեցան յիւրեանց մըտին:
Թէ մեք շինենք շատ մի թուման,
Երթանք կախենք գորբն ու զայրին:
Հետ ընկերաց ծուռ են կացել
Եւ շատ մարգիաց տուն քահեցինս:

Հետաքրքրական է, սակայն, որ Ֆրիկը միւս-
նույն նժարով չի կշռում Բուզաների, Սահիր-
Դիվանների և մասասչիների գործած հանցանք-
ները: Վերջիններիս նկատմամբ նա հայտ է բե-
րում սրտ չներողամտութուն: Մասասչիները
կամ մասասի գործին մասնակցող օրթախները
Ֆրիկի կարծիքով զղջացին ու քաղեցին իրենց
մեղքերը:

Կարծում էր նույնիսկ, թե նրանց զղջումի
հետևանքն է հենց, որ Արզունի թրով աստված
մահապատժեց մասասչիներին չարակամներին,
նրանց նեղիչներին՝ Բուզային և մյուսներին.

Յորժամ զիտաց, թէ խրատեցան
Եւ զզջացան յիւրեանց մըտին,
Տէրըն դարձեալ ողորմեցաւ,
Փոխրէնք արար հախառակին.

1 Դիվան, ԼԵ, 114—121: Հմմտ. Բանաստ., ն. տ.,

Հանց սատակեաց աստուած զնոսա,
Զինչ մասասչեց շար կամէլուն¹։

Սրանով ասում է նա, աստված լսեց հայապ-
գի օրթախներէ անեծքը։

Հանց իոխարէն արար աստուած,
Սյն Գրիգորին և իւր ազգին,
Որ ամենայն մարդ վըրկայեաց,
Թէ աւրթախնին անիծեցին²։

Այստեղից ակններէ է, որ մասասչի օրթախ-
ներ կային ոչ միայն մուսուլմաններէ և հրեա-
ներէ, ինչպէս գրում էր Ռաշիդ-ադ-զինը, այլև
գրիգորազավան հայերէ մեջ։

Ֆրիկը կամենում է հուսար, թե աստված եր-
կարացնելու է մասասչիներէ կյանքը, միջոց տա-
լով նրանց վճարելու իրենց պարտքերը։ Անգամ
ուզում էր հավատար, թե Բուզային կամ Սահիր-
Դիվանին հաջորդած Թաջարը³, Ղուջանը (Բու-
զայի գործակիցներից) և վեզիր Սադր-ադ-գուլեն,
պիտի քնդատաջեն մասասչիներին։

¹ Դիվան, ԼԵ, 130—135: Հմմտ. Բանաստ., XXXVIII,
127—132:

² Դիվան, ԼԵ. 80—83: Հմմտ. Բանաստ., ն. տ., 77—80:

³ Այս անունը տալիս է նաև Օրբելյանը՝ Ղազան-
խանի և Նովրուզի հակամարտության կապակցութեամբ,
հանձնարարելով նրան որպէս վերջինիս գործակցող «մեծ
բյուրասպետի» (Օրբելյան, Պատմութիւն, էջ 170,
նույնը նաև «Քարթլիս Յիստորիք» վրաց տարեգրութեան
մեջ. Brosset, «Histoire de la Géorgie», t. I, livr. II,
603): Երկու դեպքում էլ խոսքը, հավանորեն, Ռաշիդ-ադ-
զինի մոտ հիշատակվող Թողաչարի մասին է։

Մեջ բերելով Ֆրիկի նույն այդ տողերը, Արևոյանը գրում է. «Գրիգորը Գրիգոր Լուսավորիչն է, իսկ նրա ազգը՝ հայ ազգը: Աստուած,— ասում է Ֆրիկը,— Գրիգորի և նրա հայ ազգի վրեժն այնպես առավ, որ ամեն մարդ վկայեց, թե (հայերը) օրթոախներին (= զաւաղիւր ընկերներին) անխճեցին, այսինքն՝ հայ ժողովրդի անեծքով կատարվեց այդ. աստված նրա, ժողովրդի վրեժն առավ»¹:

Եթե Արևոյանը հարկ է համարել այսքան հանգամանորեն մեկնաբանել Ֆրիկի տողերը, դա, կարծում ենք, միայն այն պատճառով, որ ինքն իսկ գիտակցում էր, որ Ֆրիկի տողերը կարող են ստիժ տալ այլ պարզաբանության: Մենք, հիրավի, կարծում ենք, որ ճիշտ չէ Արևոյանի պարզաբանությունը: Ֆրիկի հիշատակած օրթոախներին Արդունից ճամենն բարիք» ստացած և նրա դեմ դավող Բուդայի «զավաղիւրների» շարքը գտակով, Արևոյանը նրանց պարզապես նույնացնում էր Արդուն դանին սպանողների հետ², չնկատելով այն տարբերությունը, որ գնում էր Ֆրիկը նրանց և այս վերջինների միջև: Ֆրիկը չի ասում, թե օրթոախներին անխճեցին, այլ որ օրթոախներն անխճեցին: Ֆրիկը չի հակադրում միմյանց հայերին և օրթոախներին, այլ

¹ Մ. Արևոյան, նույն տեղում, 11, 263:

² Նույն տեղում 11, 262:

ակնրախօսքին գրում է հենց հայադավան օրթոօքս-
 ների մասին, որոնց, նրա ասելով, աստված նե-
 րում է և «փոխարենք անում»։ Եթե մի կողմից
 Ֆրիկն ասում էր, թե աստված խղճաց իրենց
 հանցանքները զղջացող մասասչիններին և պատ-
 ժեց նրանց, ովքեր չարն էին կամենում մա-
 սասչիններին, կրկնելով նույն այդ միտքը,
 նա ասում էր նաև, թե աստված այնպես պատ-
 ժեց մոնղոլ պետութժյունը գլխավորած Բուղային
 և մյուսներին, որ ամեն մարդ վխայեց, թե նա
 խղճաց հայոց ազգին և կատարեց օրթօքսներին
 անեծքը։ Ֆրիկի տողերը առիթ չեն տալիս կար-
 ծելու, թե հայ ազգն է, որ անիծում է իրեն
 թշնամի օրթօքսներին, և ոչ թե հայ օրթօքսները
 իրենց մոնղոլ դարձակիցներին։

Սխալ բացատրութժյուն է տալիս Արեղյանը
 նաև Ֆրիկի այն տողերին, ուր ասված է թե՛

Զինչ մասասչի կան՝ հաւասար
 Ամենեբեան թող ժողովին,
 Որ ազաչենք ըզտէր աստուած,
 Որ ցուցանէ Արղուն զանին,
 Թէ չէ աղէկ այն արտասուքն,
 Որ թափեցին աւրթախընին՝։

1 Դիվան, ԼԵ, 150—156։ Այս տողերի մեջ հանդի-
 պող «օրթօքսներին» բառի տեղ Տիրայրը գերադասում է
 դնել Ստ. Օրբելյանի մոտ հանդիպող «Աւրղուղանին» անձն-
 անունը։ Օրբելյանի մոտ հիշված այդ անձնավորութժյու-
 նը մոնղոլական պետութժյան խոշոր դատավորներէից էր և

Ֆրիկը, ասում է Արևդյանը, այլ միջոց չի առաջարկում մտնողտեխան սիսեմի դեմ, բայց եթե ազաչել ասածուն և անեծք: Ըստ Արևդյանի, Ֆրիկի լադանքն այն էր, որ աստիամ հասկացնի Արդուն խանին, թե լավ չէ այն արտասուքը, որ օրթախները-գալագիրը բնկերները, թափել են ավել»¹,

Մինչդեռ դարձյալ կասկած չկա, որ Ֆրիկի մտաւածուն դիմողները այլ ոք չեն, քան մասասչինները: Արանք է, որ հալաքովելով մի տեղ, աստծու միջնորդությամբ պիտի հասկացնել տան Արդուն խանին, թե լավ չէ մասասչի օրթախներին լացացնելը: Ֆրիկը չի ասում, թե օրթախները արտասուք են թափել ավել, ինչպես մեկնարանում է Արևդյանը. Ֆրիկի մտաւածուն օրթախներն են արտասուք թափում իրենց կրած չարակրությունների պատճառով:

Ֆրիկը հանգեւ է բերում մասասչիններին և օրթախներին ոչ թե մի, այլ երկու տպեկտով: Մի կողմից նրանք բնութագրւում են որպես որբ և այրի «կախողներ», մարդկանց ատուն քանդողներ» և «հեա բնկերաց ծուռ» կեցողներ: Մյուս կող-

տպանդեց Արդունի տպանության կապակցությամբ: Սակայն, ներկա գերթվածքի սեղ հասած միակ ձեռագրում գրված է «օրթախներին», և ոչ մի հիմք չենք գտնում փոխելու այդ բնթկերցվածքը «Օրդուգանին» անունով, որ ի դեպ չի համաձայնում հոգնակի ձևով գրված «թափեցին» բայի հետ: (Տե՛ս «Դիվան»-ին կցված «Քննական ուսումնասիրություն», եր. 75 և հա.):

¹ Մ. Արևդյան, ն. տ. 11, 266:

մից նրանք հանդես են բերված որպէս մարդիկ, որոնք զզջում ու քափում են իրենց մեղքերը, մարդիկ, որոնք դիմում են ասածու միջամտության և, իրենց զզջման շնորհիվ Բփփարենք ստանալով, պատուհասում երկրի և ժողովրդի վտաթարագույն թշնամիներին՝ Բուզաներին, Սահիր-Պիվաններին և նամաներին:

Հաշվի առնելով Ֆրիկի ստաջիա գիրքն ու գրան համապատասխանած նրա մտայնությանը՝ կարծում ենք, որ նա պատկանում էր այն մարդկանց թվին, որոնք ինչ որ գործարքներով կապված են եղել մասսաչի օրթախներին հետ և, բնականարար, նաև շահագրգռված սրանց գործերի հաջողությամբ և մյուս կողմից՝ ըստ երևույթին նաև մեկը այն անձնավորություններից, որոնք չարաչար տուժել էին բարաթը ձեռքին քսչվոր Բրիթիկներին ու «հաքիմներին» կամ էլ խանների պետության բախտը անօրինակ կիրներին ու վեզիրներին գոները ձեծող մասսաչիներին հանդիպած պատուհասներից. նրանց նյութակուս կրախից: Բանաստեղծի տղերը հիմք չեն տալիս տակու, թե նա ինքը ժամանակին պետք է եղած լինի մասսաի գործով զբաղված օրթախներից մեկը: Սակայն, նրա մի շարք ակնարկություններից պարզ է, որ նա մեկն էր նրանցից, որոնց պարտական էին մնացել օրթախները և որոնց անվճարունակության հետևվանքով ընկել էին մեծամեծ պարաքերի տակ:

Ֆրիկի քերթվածքներում կան տողեր, որոնք հիմք են տալիս եզրակացնելու, թե մասսաչիւների կամ օրթախների վերապրած ծանր տազնապով է պայմանավորված եղել Ֆրիկի նյութական բարեկեցութեան մեղ ծանոթ փլուզումը: Ինչպէս բազմաթիվ ուրիշները, մասսաչիւնների սնանկացումից հետո պարտատերերից նեղված, նաևս ընկել էր սարկացման վտանգի տակ՝ «Վասն Արղուն զանին և Բուղային» վերնադրված քերթվածքում իր և իր նմանների մասին բանաստեղծը արանջում էր՝

Իսրայէլի գերիքն էաք,
Չեան ինք ընկել ի Բուղային
Ումեկ հաակ էր ի սրբաէ,
Թէ զինչ լինի ճար մեր բանին՝:

Ֆրիկը մեկն էր այն պարտապաններից, որոնք ճաշակելով պարտատերերի ծաղրը, գառնութեամբ էին վերհիշում գյուրին ճանապարհով հարստանալու և իշխելու իրենց ունայնամտութեանը:

Գիտեմ՝ կային հանցեղ մարդիկք,
Որ ի մեր չարքն խընդային:
Երբ նըստէաք ի հրապարակ
Ամէնն ըզմեղ ծիծաղէին:

Գրում էր բանաստեղծը՝:

¹ Գիվան, ԼԵ, 136—139: Հմմտ. Բանաստ., XXXVIII, 133—138:

² Գիվան, ն. տ. 102—105: Հմմտ. Բանաստ., ն. տ., 99—102:

Իրեն և պահանջատերերից նեղված ուրիշ իրպեաներին ունեւր նկատի Ֆրիկը, երբ գրում էր. «...տային կտոր, որ շրներն գինքըն չուտէին»։¹

Բայց ահա նաև իր և իր պես սնանկացածներին հետ դործ ունեցած պետական ու ֆինանսական կոնարագեւանների սխրեւաները.

Նորա, որ պաշառքն առին ու շատ վաշխ և մեծ
ատկոսին,

Ջհուրն ու բղղրակըն տան և գտանջանքն, որ
ոչ շիջանին?։

Տեսանք, որ Ֆրիկը գրում էր մասաոսի գործով տարվածների զղջման մասին։ Ուշադրով է, որ զղջումը հանգիստանում է նաև իր՝ Ֆրիկի գերակշռող ապրուստներից մեկը։ Որչափ կապվելով մասասչիների հետ, Ֆրիկը ևս տուրք էր վճարել դյուրին ճանապարհով հարստանալու մտայնությանը և մեղսակից հանգիստացել երկրում առաջացած ընդհանուր տագնապին, նա ոչ միայն գիտակցում է հիմա իր մեղսակցությանը մասաոսի գործում, այլև խորապես զղջում իր «մեղքը»։

Կարծել են, թե Ֆրիկի մոտ հանգիստող զղջման մտախօյր սոսկ միջնադարյան մարդուն հատուկ կրոնական ինքնախարագանման արտահայտություն էր կամ միջնադարյան հեղինակների մոտ հանգիստող գրական բանուկ մի տրամաբան, ուստի և արժանի գանցառման։

¹ Դիվան, 12, 47: Հմմտ. Բանաստ., XXII, 50:

² Դիվան, ն. տ., 50—51: Հմմտ. Բանաստ., ն. տ., 53—54:

Մինչդեռ Ֆրիկի զզջումը սոցիալ-բարոյական,
չըջադարձի, և ինքնամաքրագործման բուռն մի
ակա էր՝ վերջին հաշիւով, կապւիւած դարձյալ մա-
սասին հաջորդած նրա հարակրությունների հետ.

Միւրա իմ, ընդէ՛ր ես խըռովել,
Մ'չք իմ, ընդէ՛ր ես խաւարել.
Խէլք իմ, ընդէ՛ր ես ճաղաղել,
Միտք իմ, ընդէ՛ր ես շիւարել...
Դու քո ձեռաւքդ ես հոր փորել
Եւ քո կամօքդ ի ներս մըտել,
Զայս սև կամիս դու մեղադրել,
Խընդիր կուզան ըզքեզ տանել¹:

Խիստ բնորոշ է Ֆրիկի «Ողբանք փոշմանու-
թեան» վերնագրւած խոստովանությունը.

Զինչ մեծամեծ վաստակ արի՛
Տանիլ տուի զինքն հեղեղի...
Զգործիան ի ջուրըն ձրդեցի,
Վարմըն լըցալ ես խընդացի²:

Ֆրիկը գիտակցում է այն աղետը, որ հասցե-
նում էր ժողովրդի բարեկեցությանը մասասի
գործով տարւիւած կամ ալլեալլ գործարքներով
նրանց հետ կապ ունեցած մարդկանց սլրակտիկան:

Չեմ կացել ի պատուիրան,
Քրտել, զըրկել եմ զայլք ու զիս...

¹ Դիւան, ԼԳ., 4—7 և 24—27: Հմմտ. Բանաստ., VI, 2—5 և 22—25.

² Դիւան, Ը., 16 և 22: Հմմտ. Բանաստ., I, 29—30 և 41—42:

Ամաւթով ի յաստուծոյ,
նւ պարտական մինչ ի հողիս:
Շատ պատճառ եղէ չարեաց,
Յղուկ ու վտյ ինձ՝ այս ձերխս¹:

Մի այլ տեղ ասում է.

Շինեցի շատ մալ ու դանձ և հողոյս բաժին
չօգտեցայ,
Չամէն դատեցայ մեղաւք, իմ հողոյս գրծսխք
չանցայ²:

Մի տեղ բանաստեղծը նետահար արծվի հետ
համեմատելով իրեն՝ ասում է.

Նրմանեցար արծուին
Ու ի յաւդն ելար չքփացար,
Ասցեր՝ թէ շատ մի գեղան գուգիմ,
Լինիմ համս ի կատար:
Նետով մին հանց խոցեցար,
Որ գինչ բղիբակ վասեցար.
Երբ դաչքդ ի նետըն տըւիր՝
Ի քու թևդ ըղինքըն տհասր.
Դու քո լեզուովդ ասացեր,
Թ' իմ թեկս չեղե ինձ հընար³:

Սարսափով է պատկերացնում իրեն այն հար-
ցաքննությունը, որին ենթարկվելու է ինքը
անեղ դատաստանի օրը՝ հաշիմներ (=բարաթ-
ներ) կեղծելու համար:

¹ Դիվան, Դ., 27 և 31—32; Հմմտ. Բանաստ., II 46—
47 և 50—53:

² Դիվան ԺՁ. 43—44; Հմմտ. Բանաստ., XII, 42—43:

³ Դիվան, ԼԱ., 70—74; Հմմտ. Բանաստ., XXXIII,
134—141:

Զուռնի՛ս դու հաշիւ գըրած, հանց ուղորդ, որ տաս
 դու մինակ,
 Լինիս դու ի մեծ ատեանն՝ ամէն ի ծաղր և
 նըշաւակ,
 Կասի քո բըլբուլ լեզուդ՝ ի յամէն լինիս դու լեզակ.
 Ո՞ւր են քո ամեն բաներն հայերէն՝ մասալ ու
 առակ¹:

Կամ կարգացեք այս տողերը.

Ֆըրիկ, այս այնոր փոխան, որ կացեր յերակ դու
 մուրհակ,
 Զաւրըն կեր ու խում արիր, և՛ հանգար ի բուրդ,
 խառ մուշրտակ:
 Զասիր՝ թէ գալոց է օրն, որ լինի անեղ հրապարակ,
 Բասաիկ որ կըրես հիմիկ՝ մեծ ամօթ և մերկ
 խայտառակ²:

Ուրիշ բանքերում շահի և բարեկեցութեան
 խելացի աղբյուր է հայտարարում նա չափավոր-
 րութեանը և աշխատանքը:

Զոտըրդ քո չափով փրոես
 Եւ աղա լինիս շահաւոր³:
 Զայս յիմարըն կու սսէ,
 Թէ անաշխատ հարբստանամ⁴.

Ֆրիկն այստեղ հռչակում էր մի սկզբունք,
 որը հակադրված է ֆեոդալական միջավայրում

1 Դիվան, Ին., 48—52; Հմմտ. Բանաստ., V11, 46—49:

2 Դիվան, ն. տ. 20—23; Հմմտ. Բանաստ., ն. տ.,
18—21:

3 Դիվան, Իէ, 36; Հմմտ. Բանաստ., XXXIX, 61—62:

4 Դիվան, Գ., 57; Հմմտ. Բանաստ., X, 108—109:

իշխող մտայնութեանը: Մի հայացք էր այդ, որ արտահայտում էր քաղքենիութեան սոցիալական հավատամքը:

IV

Չենք կարծում, թե մեծարելով Արղունին, Ֆրիկը զեկալարվում էր միայն զեպի նրա հակաակիրքները տածած անձնական վրեժխնդրութեան զգացումով: Եւ բնութագրում էր Արղունին որպէս «աստվածագիր թագավոր»,

Չոր քրիստոնեայքն ամէն հաւսար
Ի յաստուծոյ կու խնդրէին՝:

Այս տողերի մեջ գծվար չէ նշմարել Արղունի հետ կապվող ադատագրական ակնկալութեաների սրձագանքը: Քաղաքացիական այն պատերազմը, որ վարեց հեթանոս Արղունը իսլամութեանը դնդունած Ահմեդից էլիսանների գահը խլելու համար, Մարքսը որակում է որպէս «մոնղոլների մատառայական ապստամբութեան»¹: Ապստամբների վստահութեանը Արղունը պիտի գրաված լիներ մանապէհ իր գահակալութեան առաջին քայլերից, երբ հատուկ հրամանագրերով կոչ էր անում՝ վերացնել «ամեն բնութեան և վերավորանք», հող տանել հպատակների վստահութեանը նվաճելու մտին, հնարավորու-

¹ Դիվան, ԼԾ, 10—11: Հմմտ. Բահաստ., XXXV, 9—10:

² Архив Маркса и Энгельса, V, 232.

թյուն տալ «ռայաթներին հանգիստ սրտով
զրապիկել ըսրեշինությամբ և երկրագործու-
թյամբ»¹։

Սամվել Անեցու շարունակողը Արղունի մա-
սին գրում էր, թե «էր յոյժ սիրող քրիստո-
նէից»²։

Ստ. Օրբելյանը հաղորդում է, թե քրիստոն-
յաների աստվածն է, որ գարձրեց մեծամեծնե-
րի սիրտը դեպի Արղունը, ոչնչացնելով նրա
դեմ դավողներին³։ Նորահայտ մի ժամանակա-
գրության մեջ հեղինակը գրում էր նրա մասին,
թե էր «յոյժ ծանոթ և սիրող քրիստոնէից օրի-
նացած, իսկ մի այլ տեղ ասում, թե «աստուա-
ծակոչն այն և աստուածապիբ Արղունն... նստի
դան և թագաւոր ի վերա մեհնայն աշխարհիս,
խաղաղանայ աշխարհս, խնդան քրիստոնեայք և
պայծառանան ևկեղեցիք»⁴։ Մոնղոլ պատմիչների
ստեղծով, Արղունի օրոք աղքատների վրա ծան-
րացած տուրքերը վերաբարձվում էին հարուստ-
ների վրա⁵։ Ասում էին, թե նա սիրում և հո-

¹ Рзаша-ад-аша, III, кр. 113:

² Ս ա մ ու է լ Ա ն է ց ի, Հավաքմունք ի գրոց պատմ.
Վղրշպ., 1893, կր. 163:

³ Օ Ր Ր Ե Լ Կ Ա Ն, կր. 425 և հտ.:

⁴ «Մանր ժամանակագրություններ» 13—18-րդ դդ.,
հ. I, 45 և 47:

⁵ D. Ohsson, Hist. de Mongols, Amsterd. 1834—
5, III, 268: Hammer-Purgsthal, Geschichte der
Ulchane. Darmstadt 1842—1844, կր. 391 և հտ.:

վանավորում է քրիստոնյաներին¹, Հայտնի կուրսդ էր լինել վերջապես և այն, որ Արդունը և նրա նախորդները պարտավորութուն էին ստանձնել Հոռոմի սլապի առաջ՝ միանալու Ֆրանկներին՝ Երուսաղեմի ազատագրման նպատակով Վանսօրենների դեմ՝ կովեյու համար²:

1273 թվականին վանեցի Ատոմ քահանան սղոքում էր Հիսուսին զվիտայէ թագաւորիս մերոս Ապաղայ խանիս՝ զաւրութիւն և յաղթութիւն ի վերա թշնամեաց խաչին... Եղիցին թշնամիք սորա կոխան ամենայն ազգաց քրիստոնէից»³, Այս տողերի մեջ ծրարված են, անշուշտ, ակընկալություններ, սրոնք ծնունդ էին առել Լյուդովիկոս IX-ի կազմակերպած խաչակրաց արշավանքի և դրան հաջորդած մոնղոլ-եվրոպական բանակցությունների կապակցությամբ:

Ֆրիկը մտահոգված է ոչ միայն իր երկրի ու ժողովրդի, այլ ամբողջ աշխարհի և բովանդակ մարդկության խաղաղության ու բարօրության մասին: Մեծարելով «աստուածազիր» Արդունին, նա սպասում էր քրիստոնյաների թագակիր այն հերոսին, որն ընդառաջելով պապական Հոռոմի հետ զաշնակցած հեթանոս էլխանին, պատ-

¹ D. Ohsson, ն. տ., III—67 և հտ.:

² Ն. տ., 67 և հտ:

³ Ե. Լալայան, Տուրակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 97:

յանից հանելու է կտրուկ իր սուրբ՝ արատելու է
տառապող մարդկությունը

«... յանաւրինաց

Եւ ի ձեռաց չար տանջանաց»¹:

Փրկիլը հալատացած էր, թե պիտի իշխի
քրիստոնեական աշխարհի ադատությունն ու
խաղաղությունը: Քրիստոնյաների մեջ նա որո-
նում էր այն թագավորին, որը պիտի օգնության
հասնի անօրեններին ձեռքով կոտորվող քրիս-
տոնյաներին: Հալատացած էր, թե աստված

Յարուցանէ մեզ թագաւոր սուրբ, որ առնէ
զարդարութիւն

Խնդրէ վրէժս ի թշնամեաց, որ քրիստոնեայց
հոր կու փորեն:

Յորտակիլ ըզմեր քակողն...³

Սակայն այս տողերը վերաբերում են այն
ժամանակներին, երբ բանաստեղծը դատապար-
տում էր «անարդար» առևտուրն, «մեծ տոկո-
սին», բայց դեռ չէր հրաժարվել «արդար» առև-
տքից ու փոքր ասկոսից, երես էր շուռ տալիս
անխիղճ վարկատուներից, բայց չէր նշավակում
խղճմիտ մուրհակը և քարոզում էր վերցրած
պարտքը վճարելու սկզբունքը: Այդ այն ժա-
մանակամիջոցն էր հենց, երբ նա հույս ուներ
տակավին, թե Արդունը վերջ պիտի տար իր և
օրթոթաների տառապանքներին ու չարակրու-

¹ Դիվան, ԺԱ., 272—273, Հմմտ. Բանաստ., XI, 270—271:

² Դիվան, Զ. 75—77, Հմմտ. Բանաստ., XXXIV,
103—107:

թյուններին, և ավելին՝ երբ սիրում էր հավատալ, թե մոնղոլների ու ֆրանկների զինակցությունը վերջ պիտի գնե Քրիստոսնյա աշխարհի բոլոր տառապանքներին։

Քրիստոսնյաների անմիաբանության մասին Ֆրիկի արաունջներից ակներև է, կարծես, որ մամլուկները և սարակինոսները դեմ պապական Հռոմի և արևմտաեվրոպական պետությունների հետ զինակցելու համար Արղունի վարած բանակցությունները հանգիստում էին անհաղթահարելի խոչընդոտների։ Եվ արևմտյան պետությունները, և պապական մարտնչող օրդենները՝ պառակտված էին ներքուստ։ Ինչպես բազմաթիվ այլ հարցերում, այնպես նաև Արևելքի վերաբերմամբ նրանց շահախնդրությունները բախտվում էին միմյանց հետ։ Արղունի եվրոպական Եղաշնակիցների՝ Ֆրանսիայի Ֆիլիպ IV թագավորի և Անգլիայի Էդուարդ I թագավորների հարաբերությունները հասան ծայրահեղ լարման և հանցեցին պատերազմի։ Նրանց խոստումը՝ արշավել Սիրիայի խաչակիրներին և Կիլիկիայի Բրիտանյաններին՝ Եգիպտոսի դեմ պաշտպանելու համար՝ շիրակիանացավ։ Եվրոպական մյուս պետությունները, Վենետիկը, Ջենովան, Արագոնիայի և Սիցիլիայի թագավորությունները, տնտեսական և քաղաքական իրենց շահախնդրություններով ուղղակի կասկած էին եգիպտական սուլթանի հետ։ Անգամ մամլուկ

զորքերով պաշարված Ա.ք.քեայի բերդում իրար դեմ պայքարում էին ջենովացիները, տաճարականներն ու յոհանիտները: Այս ամենը արագացրեց Ա.ք.քեայի անկումը (1291), վերջ տալով խաչակիրների տիրապետությանը Սիրիայի ծովեզրին և անմիջական վտանգի տակ գնելով մոնղոլների և արևմտաեվրոպական «գաշնակիցների» հետ հույսեր կապած Կիլիկիայի հայ պետությունը¹:

V

Արդունի և գաշնակիցների վրա դրած բոլոր այս հույսերն ի դերե էին ելնում: Էլխանը չվերացրեց մասասաշինների չարակրուքյունները: Բուզային հաջորդած այն էմիրներն ու վեզիրները ես, սրոնցից Ֆրիկը ակնկալում էր գրական փոփոխություններ՝ մահվան դատապարտվեցին, շատերը Բուզայից քիչ հետո՝ գրեթե հուլյն 1289 թվականին, իսկ Սադ-սոգ-Պուլեն՝ Արդունի սպանության կապակցությամբ 1291 թվականին և Թաչարը (= Թոգաչարը՝) 1296—1297 թվականներին²:

Մինչ այդ երկրի անառատական գրությունը գնալով սրվում էր՝ Գրամատագնապը հասնում էր իր ծայրակետին: Կենարոնում և տեղերում սկսում են բաց թողնել վատորակ գրամ: Սա-

¹ Հմմտ. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 19. 2, էր. 419 և հու.:

² Հմմտ. Рашид-ад-дин, III, 127, 168, 171, և Ստ. Օրբելիան, էր. 430:

կայն շուկան հրաժարվում է դրանից, կամ բարձրացնում ապրանքների գները:

Արդունին հաջորդած Վեյգաթու խանի ժամանակ չարաշահումներն ու արդարագատության անկումը համատարած էր ու լիակատար: Վեզիր Սադր-ադ-գինը մուկեհսրեն պատեցնում էր թըղթադրամների թողարկման մեքենան: Այս ոչ միայն չէր վերացնում ճղնածամը, այլև նոր կաթված էր հասցնում ապրանքների շրջանառությանը¹: Սրա օրոք ոչ սք չէր կարող ստանալ իրեն հասնելիք օրապահիկն ու սոճիկը. նրա բախտներն ու կարգագրերը (наряд-ները) ձրի հնարքներ էին ու խարեություն: Չարաշահումների և ավերումների պատճառով սայաթների մեծ մասը մարդերում թողնում էր բնակավայրը և սպառվինում ուրիշ երկրներ. քաղաքներն ու գյուղերը պատարկվում էին: Տեղերում մնացածները, խուսափելով սուրքահավաքներից ու պարտասերերից, ծեփում էին աների մուտքերը, կամ թողնելով դրանց մեջ նեղ ծակեր, ելումուտ անում տանիքներից²:

Երևույթներ էին սրանք, սրանք մասնավորապես աղյանշում էին Հայաստանի և Անդրկովկասի պատմության այն շրջադարձը, որ 9 — 13-րդ դարերի ապրանքաշրջանառության, քաղաքային

¹ Р а ш и д - а д - д и н , III, 135.

² Նույն տեղում, 250 և հա.:

կյանքի ու քաղքենիության վերընթաց զարգացումից հետո տապարեղ էր բացում հույնքան երկարատև հետաշարժության ու քայքայումի տառջ:

Իրիստոնյաների ազատագրման հույսերն իսպառ մարեցին Ա. ք. քաջուս 1291 թվականին խաչակիրների կրած պարտությունից հետո:

Անցնելով հականարձակման, եգիպտացիները սպառնում են հայկական Կիլիկիային: Մտնողների վրա հույս դրած Հեթում II-ը գրում էր այս պահին.

Քանզի տսին քաղաքն Աբբա
Եւ ըզբոլորս որք ընդ նրմա.
Տեսին թէ չէ ոք օղնական
Եւ ոչ ինքեանց ինչ ներհական,
Զի յորս էօք մեք ապաստան
Ազդ նետողացըն՝ հեղզացան.
Զայս առաւել յոխորացեալ
Զմեզ որսային զազանացեալ
Որք զօրս անթիւ գումարեցին
Զքնջել ըզմեզ ամենեկին՝:

Իր հերթին էլիսանների պետությունը խճըճվում է քաղաքացիական կռիվների մեջ, որից հետո, Ղազան խանի գահակալության սկզբում, Հայաստանի գրությունը սկսում է ավելի վատթարանալ: Ասկա հարստահարություններին ավելացան՝ գինատախկան պատերազմները, մուսուլման վեզիրների ու էլիսանների ձեռնար-

¹ Ա. 1 ի 2 ա ն, Հայաստանում, 518:

կամ կրոնական հալածանքն ու դաժանությունները: Իր «Գանդատ»-ում՝ Ֆրիկը արտահայտում էր.

Այլ կամք ի ձեռս անաւրինի,
Որ կու վարեն անգին գերի,
Քանի՛ քակեն հկեզեցի,
Քանի՛ շինեն սլիզձ մըղկիթնի:
Քանի՛ կանայս թողուն այրի,
Եւ քանի՛ որք քրիստոնէի,
Որքան արիւն հեղուն յերկրի,
Քանի՛ աւնեն բան խոտելի՜:

Ղազարն խանի վարչության տարիներէ մասին ունենք Ռաշիդ-աղ-ղինի հետաքրքրական տեղեկություններն այն մասին, թե քանի որ ոչ ոք չի հոժարում ուրիշ գրամ վերցնել, Վրաստանում խի սկսել են գործել էլխանական ստեղծարամ՝ «աստծո և մարգարէի անունով», չնայած որ վրացիները շէն ճանաչում Ղազարն խանի լիշխանությունը²:

Թանկարժեք այս վկայությունը վերաբերում է ոչ միայն բուն Վրաստանին, այլև Հայաստանին, որն այդ ժամանակ Վրաստանի մարզերից մեկն էր: Ռաշիդ-աղ-ղինի գրքում հայերը կամ նրանց ֆեոդալները, օրինակ, Մահկանաբերդի և Կայենի Սադուն Արծրունին, կամ սրա օրդին՝ Հաղբասի

¹ Դիվան, Հավելված Զ, 79—86; Հմմտ. Բանաստ., XLI, 43—50;

² Рашид-ад-дин., III, 274;

իր որմնանկարով¹ հայտնի Սուլթուս Բուղան, վրացիներ ևն անվանված, և իննելով անշուշտ այն հանգամանքից, որ այս իշխանները «վրացագավան» էին կամ վրաց թագավորի աթարեկներն ու սպարապետներն էին²։

ժամանակի վրաց պատմագրի ասելով, Սուլթուս-Բուղան և նրա կուսակիցները օգտվում ևն Արղունի անրուժելի հիվանդությունից և հեռացնելով Վախթանգ թագավորին՝ կամենում էին Վրաստանի գահը բարձրացնել Դավթին՝ 1289 թվականին զրպարտված ու Արղունի հրամանով սպանված Դեմետրե թագավորի որդուն։

Կոստյքի Ավան գյուղի մի արձանագրության մեջ թագավորի անունից նրա որդի Դավթը գրում էր. «Ի թվի 217 (1285) յաշխարհակալութեան արքայից արքային Արղունին. ի թագաւորութեան վրաց և հայոց Դէմէարէին, ևս Դավթի, որդի Դէմէարի թագաւորին, թողի զԱւանայ այգեաց շարեան (իմա՛ շարխաթը՝ որպես հարկ կամ բնահարկ վճարվող բերքի տասանորդը — Ա. Հ.) վասն միամտութեան սոցա և յերկարութեան կենաց մերոց և թողութեան մեզաց մերոց։ Արդ որ ի մերոց կամ յաւտարաց աէր լինի Աւանայ և զհաստատեալ գիրս մեր խափա-

¹ Հրատարակված «Христианский Восток», СПб, 1912, к. 1, 351, աղյուս. 21։

² Рашид-ад-Դին, III, 67 և 134.

նել ջանայ և շարեա տանու կամ հարակաու
ի ջուլհակէ՝ նզովեալ լիցի...»¹։

Վերջերս հրատարակված է նաև *Սուլլու-Ռու-
դայի՝ Ավանում թողած արձանագրությունը*.
«Թվի 212 (1287) յաշխարհակալության արքա-
յից արքայի Արդունին, ևս աթաքակ և ամիր-
սողասար *Սուլլու-Ռուդա* որդի աթարակ և ա-
միրսողասար Սադոնին թող[ի] զԱւանայ զայ-
գեաց շարեան և զջուլհակելոյն հորակաուն վասն
միամասութեան սոցա և յերկարութիւն կենաց
իմոց և եղբարց իմոց և յիշատակ ծնոցաց իմոց»²։

Այս վկայությունները կարևոր են *Սուլլու-
Ռուդայի* անվան հետ կապված շարժման քաղա-
քական բնույթը հասկանալու համար։ Արշալի
Դեմեաբեն գլխավորում էր Եվրաց և հայոց թա-
ղավորությունը, Դավիթը հանդես էր գալիս որ-
պէս նրա իրավունքների ժառանգորդ, և ակներև
է, որ արդեն 1291 թ. Վրաստանում և Հա-
յաստանում առկա էր աստատանքապահ շար-
ժում։ Այդ շարժմանը միացան մանդոլդորավար
Թաշարը և Օսեթիայի թագավորացն Փարեջանը,³
1293 թ. Քեզաթու խանի կողմից կառավրված

¹ *Մ. Ս մ բ ա ա յ ա ն*, Տեղեկագրություն Գեղարքուն-
եաց ծովագարդ գավառի, եր. 254։

² *Կ. Ղ ա Ք ա գ ա բ յ ա ն*, Ավանի երկլեզվյան ծած-
կագիր արձանագրությունը, Երևան, 1945, եր. 20 և հու.

³ Borosset, *Hist. de la Géorgie*, t. I. livr. II, եր.
608։

Խուժլու-Բուդա Արծրունին տպտտամբուժյան
դեկավարն էր:

Նշանավոր իր «Ողբ»-ում Սաչատուր Կեչա-
ուեցին նշում էր «գաւառաց երկրումը» և 1293 թ.
Քեղաթու-խանի հրամանով հտուափնված Խուժ-
լու-Բուդայի, ինչպէս և մահապարտված Դե-
մետրե թագավորի եզերական վախճանը:

Տես ըզգաւառս ի յերերմանի...

Ձխուժլու-Բուդէն յարեան հալավի

Ձիւր աննրման պատկերն ի հողի.

Ձարքայն չիշխեմ հիշել ըզվրացի

Ձատլաս երեսն ըզԴէմէարէի¹:

Ղեկավարների գլխատումով վերջ չառած շար-
ժումը Հայաստանում և Վրաստանում հարատե-
վում էր նաև Ղազան խանի թագավորության
առաջին տարիներին: Ապտտամբուժյան դրական
հետևանքներից մեկն էր, անշուշտ, որ Թավրի-
զում, Մարագայում և այլուր սկսված եկեղեցի-
ների ավերումը շտարածվեց Անգրկովկասի վրա,
Բնորոշ է Սա. Օրլեյյանի վկայությունը. նշելով
Նախջավան քաղաքում եկեղեցիների դեմ սկսված
արշավանքը, նա հարում է. «բայց մեծ գլխա-
ւորքն ոչ թողացուցին քակել զեկեղեցիան ակ-
նածեալ ի վրաց զօրացն: Եկին ի մեծ աթոռն
Սիւնեաց և կամէին քակել զեկեղեցիան. զորս
կաշառօք և բռնութեամբ ոչ թողացուցաք: Կո-

¹ Ա լ ի շ ա ն, Հայապատում, եր. 529:

դոսպտեցին զվաներն որ ի գաւառին Նախջաւա-
նաւ. իսկ այլ աշխարհս Հայոց, զոր Երասխայ
գետն հատանէ, մնաց շնորհօք Աստուծոյ՞՛:

Առժամապես մուսուլմանական երկրամասե-
րում իսկ վերջ առավ քրիստոնյաների հալածու-
մք: Դազան խանը ձեռնարկեց մի շարք սե-
ֆորմների, որոնց նպատակն էր զսպել ծայրա-
մասերում բռնկվող շարժումները, չթողնել, որ
Անգրիկովիասի օրինակը վարակի ազրյուր գառ-
նա ամբողջ պետութեան համար:

VI

Այս իրադրութեանները մեջ էր, անշուշտ,
որ կատարվեց խոշոր այն հեղաբեկումը, որ նկա-
տելի է Ֆրիկի այս ժամանակաշրջանի սակզմա-
գործութեան մեջ:

Պիտի պատկերացնել բանաստեղծի հուսա-
հատ վիճակն այս պահին: Աստանդական, ծերա-
ցած, նա չունի ոչ կին, ոչ գափակ, ոչ եզրայր,
ոչ կարեկից ընկեր. վաղուց անցել էին այն օրե-
րը, երբ նրան շրջապատում էին հպարտ մա-
սասչիների շքերթներն ուղեկցող զսլամներ ու
սերհենդներ:

Թէ ուն'ի ճորտ ու ծառայ,
կամ կարեւոր յաստըւորիս,

¹ Օրբեկան, Պատմութիւն, կր. 473:

Սոքա ալ զիս ուրացան
Եւ ասեցին զաղբատ հոգիս¹։—

Գրում է բանաստեղծը։

Մնանկ ու տնանկ՝ ոչ միայն ճորտ ու ծառա
չուներ Ֆրիկը, այլև զրկված ապրուստի բոլոր
միջոցներից, ինքն իսկ մեկն էր բազմահազար
այն ճորտ ու ծառաներից, որոնք հառաչում էին
պարտատերերի լախտի տակ... Մեկից ավելի ան-
գամ ենք հանդիպում նրա մտտ ռեբրի Ֆրիկ՝
տրտահայտությանը։ Միշտ չէ, որ զա՛ սլտի հա-
մարենք քրիստոնեական ինքնափեռման բա-
նուկ ձև. հաճախ գրանով հատկանշվում էր նաև
Ֆրիկի իրական վիճակը։ Այսպես, երբ նա
գրում էր՝

Գանձով գրնած ես զու գերի
Դու է՞ր խրմես զաւրըն զինի²։—

«Գանձագին գերին» այստեղ չի նշանակում,
հարկավ, թաթարների ձեռն ընկած և փրկանքով
հեռ գնված՝ գերի, ինչպես սխալարար մեկնա-
բանում էր Մ. Արեղյանը³, այլ՝ գանձով գնված
կամ պարտք վերցրած «գանձի» զիմաց գերի ու
ստրուկ պարձած անվճարունակ պարտապան։

... Նզայ հարամու ընկեր,
Թալանեց ւ՛ արար զիս գերի⁴

1 Դիվան, Դ., 13—14; Հմմտ. Բանաստ., 11, 18 21;

2 Դիվան, Ը., 17; Հմմտ. Բանաստ., 1, 91—92;

3 Հմմտ. Արեղյան, ն. տ., 11, 253;

4 Դիվան, Խ2, 11; Հմմտ. Բանաստ., XXX, 16—17;

Կու խոցիմ ի յանճաւատնուն...
 Յաւել՝ թէ գինի խրմեմ,
 Եւ ծըփամ գինչ նաւն ի յարուն.
 Գընն, թող ի բաց դամէն
 Ու եզիր սիրոց վաներուն՝:

Մուրճակների տարափից նեղված, պարտա-
 աներից սրգոզած, կշտամբանքներից ամօթա-
 հար, բոլոր հեռանկարներից ձեռնխալի, հոգսերի
 ու վշտերի հատակն իջած՝ բանաստեղծը փոր-
 ձում էր խեղդել իր տառապանքը գինու գալա-
 թի մեջ, երբեմնակի մարում ինքնամոռացու-
 թյան գրկում:

Բարեկեցության վերնահարկից նա իջնում է
 կարիքի այն ներքնատունը, որը տկար բնավո-
 րությունների համար գամնում է բարոյալքման
 խորխորատ: Այգոյլիսիների համար չկա արդեն
 ոչ մի վերելք և նրանց չի կարող սփռվել ան-
 գամ մարդկային ձրի կարեկցությունը...

Սակայն Ֆրիկը չէր պատկանում տկար մարդ-
 կանց թվին: Կյանքի գառն փորձերը միայն
 պատճառ էին, սրպեսզի նա բարձրանար անձնա-
 կան մտահոգությունների նկուն մակերևույթից
 և նշմարեր այն ճշմարտությունները, որոնց
 յուրացման կամ կենսագործման ճանապարհով,
 ինչպես ուզում էր հալատալ նա, պիտի կործան-

1 Դիվան, ԺԷ, 5—6 և 15—16: Հմմտ. Բանաստ., 111,
 6—14:

վեն տիրող անարդարությունները: Այս մասին
են վկայում գեթ նրա «Դիվան»-ի նյութերը:

Ֆրիկի բանաստեղծական սլաոկերներից մեկը
առաջ է բերել հակադարձ մեկնարանություններ:
«Բան ոգեղան և լաւ» կոչված քերթվածքում նա
տտում է.

Զիմ աչուերրս չափ արի և զծովու ջուրն չափեցի:
Զիմ միտրս յողորդ արի և՛ ի ծովու յատակն

Իջուցի:

Վասն այն մարդարտին համար, որ ծովու յատակն
լինի:

Այնչափ ազաչեմ զաստուած, որ հողոյ աչքս
բացըսի:

Եւ իմ հինգ բղղայարանքս, աշխարհիս ժանդէն մա-
բըրի:

Ծանր ինչ ուղեցիր, Ֆրրիկ, զու զխեղ թ՛ այդ երբ
կատարի:

Քո աչքդ ու սկանջդ ու միտքդ և բնութիւնդ սուրբ
կու պիտի՛:

Մի այլ տեղ բանաստեղծը մարդարտի փո-
խարեն գոհար է սրոնում ծովի հատակում.

... Խնդրեմ զայն գոհարն, որ փարթամանամ,

Ու տեսնում իմ մրտաց աչաւքս ու զողամ.

Ով բերէ զինքն առ իս, որ պահ մի խրնդամ,

Կու քաղի ունչս յինէն, թէ կըրբ մաւտենամ,

Եւ առնում պահ մի յափս և ուրախանամ:

Եւ հողով ու մարմնով ևս անմահասամ՝:

¹ Դիվան, ԻԴ, 54—60: Հմմտ. Բանաստ., IV, 49—57:

² Դիվան, IԶ, 71—76: Հմմտ. Բանաստ., XXXVII,

Ոմանց սա առիթ է տվել կարծելու, թե ծովի հատակում որոնած «գոհարը» կամ «մարգարիտը» երկրի երեսին որոնած «ազգային» կամ «հասարակական» իդեալի սիմվոլն է սոսկ: Մյուսները հերքելով այդ կարծիքը, ասում են, թե դա կրոնական մի մտապատկեր է սոսկ, «միստիկական անմահ կյանքի», «անանց բարու», «հոգով ու մարմնով անմահանալու» կամ «Քրիստոսի տեսության» հասնելու կրոնական պատկեր ու հույզ¹:

Փաստորեն սիմվոլիկ ոչինչ չկա այստեղ: Կրոնական է Ֆրիկի բանաստեղծական պատկերն ըստ ձևի, բայց բարոյական ըստ բովանդակության: Ճիշտ է, որ քրիստոնեական ուսմունքի նմանեցումը «մարգարտի» կամ «գանձի»՝ ընդհանուր տեղի էր միջնադարյան հայ կամ օտար գրականության մեջ²: Սակայն ակներև է և այն, որ համաքրիստոնեական ընդհանուր տեղին Ֆրիկի սգրերգության հեռնախորքի վրա ստանում էր նոր իմաստ: Նյութական շահաստացության ուղիներից հրամարված Ֆրիկը որոնում է հոգու

¹ Տես Մ. Արեղյանի մոտ, ն. տ., II, 288 և հտ. արված վկայակոչումները և իր՝ Արեղյանի առաջարկած մեկնությունը:

² Հմմտ. Մխ. Գօշյան-Առակը, Վենետիկ, 1854, էր. 146, նաև՝ Н Я. Марр Сборникъ притч Вардана, СПб, 1899 I, 335 և Մ. Պոտոբյան, «Կոստանդին Երզնկացի», Վենետիկ, 1905, էր. 81 և հտ.:

գանձ, բարոյական գոհար: Սուզվելով մաքրագործող զղջումի ծովաճառակը, նա կամենում է սրբվել շրջապատի արտաներից, ազատել իր զգայարանները «աշխարհի ժանգից»: Ուրիշներին գժրախտության ու տառապանքի գնով ձեռք բերած բարեկեցության ուղիներից հրաժարվելու բուռն պահանջ էր այս, ներքին բյուրեղացման վառ մի երազ:

«Գոհարը» կամ «մարգարիտը» այսուհի կատարում են նույն գերբ, ինչպիսին նրա զղջումնային պոեզիայի լավագույն նմուշներից մեկում կատարում է «աստվածային լույսը»¹:

Նույն լույսի շողերով է ճառագիլած անգամ բանաստեղծի սիրո օրհներգը²:

Սրտի և աչքի բյուրեղացում, խելքի և մաքի պայծառացում՝ ա՛նա ինչ էր սրտնում ֆրիկը զղջումի և փրկագործման ուղիներում, անձնական ինքնագաման ծովաճառակներում կամ գերբնական սիրո ոլորաներում:

VII

Ֆրիկի միտքն ու սիրտը զամփած չեն սոսկ անձնական փրկագործման ուղիներին: Հոգևորական ապրումների ու խսկումների նեղ կղերից

¹ Դիվան, ԺԴ, 28—45 և Բանաստ., XV, 26—55:

² Հմմտ. Դիվան. ԻԲ, 30—33 և Բանաստ., XXV, 50—61:

նրա քնարերգությունը վերածում է ըմբոստու-
թյամբ տագորված սոցիալական իմաստասիրու-
թյան:

Անձնական դառն փորձը լծորդված ընթացիկ
իրագարձությունների հետ, ծայր է տալիս բա-
նաստեղծի խոր մտածումներին: Խոհեր էին
դրանք, որոնք ստանում են հանրուհասկ իմաստ:
Բանաստեղծի քնարն անդրագառնում է աշխար-
հի վարիվերումներին, «Փայլաքի» նենդ հանաք-
ներին, «բախտի» ծուռ դատաստանին: Փրկիլը
նշտվակում է երկրի տերերին ու իշխաններին,
փոզատերերին - ու խաշնատերերին, մեծատուն-
ներին ու հոգևորներին, շահատակողներին ու
զրկողներին:

«Փարթամութեանըն չէ մաւայ,
Ոչ մալն, ոչ մուլքն, ոչ հաղինայ,
Գընա բարեաց առաջք արա,
Զի երազի նրման է սա՞լ:

Օտոանալով չարիքի դեմ՝ նա կարեկցում է
«Փայլաքից» հարվածված «անբախտներին»՝ աղ-
քատներին ու զրկվածներին, ճորտերին ու ծա-
ռաներին, անտուններին ու որլերին:

Զինչ ցանկութիւն մեղաց քեզ կայ,
Զամէնն ձըդէ՛ւ ազատ մնայ,

1 Դիվան, ԺԲ, 113—116: Հմմտ. Բանաստ., XVII,
102—105:

Նրկու տէրանց Լ՛րբ կարենաս,
Հանց ծառայել զինչ ոլխանայ՝

Այս կարգի քերթվածքներում մեր առաջ
մերկանում է քրիստոնեական միջնադարի խո-
խոս մտայնությունն աշխարհի ունայնության
մասին: Բանաստեղծը հանգել էր այն մտքին,

Թէ ճշմարիտ է բանդ 'ւ ողորդ՝ այս կենցաղըս
որ խար կու տայ՝:

Կամ ախանջ դրեք բանաստեղծի այս խոսքե-
րին, որ բացակայում է նրեանի հրատարակու-
թյան մեջ.

Ապա երբ կասես ըզկալն և լինի քեզ շատ մի վաստակ,
Յառաջն աստուծոյ դու հան ի հալալ արդեանց
քոյ տասնակ

Յայնժամ զինչ տու քեզ մընայ՝ զայն արտ ի
յերկու կիսակ,

Ըզմէկն անդէնին դու տուր և զմէկալն՝ ի հաւս
քեզ ճարակ:

Ձայս կեանքս ուրացիր, Պըրիկ, և անդէնին դու
էլ խընդրակ,

Այս կեանքս է զըրկող համակ, աստ շառնուս դու
փառք ու ոլբակ:

Պահաւք 'ւ աղաւթիւք սպանէ ըզմարմինդ և լաց
դու յերակ

Հողիդ հայելի զառնայ ու տեսնուս զամէնն
բովանդակ՝:

¹ Դիվան, ԺԲ, 117—120: Հմմտ. Բանաստ., XVII,
106—109:

² Դիվան, Թ. 32: Հմմտ. Բանաստ., V, 27:

³ Դիվան, ԻԶ, 70—76:

Բայց բնորոշն այն չէ միայն, որ Ֆրիկն իր մի ոտը պահած ունի միջնագարյան աշխարհամերժ գիտակեալի վրա, այլ որ նա մյուսով մըղվում է առաջ, աշխարհահաստիչ և աստվածամարտ հայեցակեալին ընդառաջելու համար:

Ֆրիկն ազատ չէր միջնագարյան քերթողներից շատերին հատուկ միտախցիզմից: Սակայն նրա միտախցիզմը իդեոլոգիական շղարշ է սոսկ, որ սքոդում է նրա հակաֆեոդալական տրամագրությունները: Նրա միտքը ավայտում է կրոնական կապանքներին մեջ, սակայն նա սկսում է արդեն ազատագրվել այդ կապանքներից: Նրա ուշադրությունը թեքվում է դեպի մարդը, դեպի նրա հասարակական կացությունը, կարիքներն ու հույզերը: Նա բևեռում է իր հայացքը ոչ միայն նրա վրա, ինչ հատուկ է բոլոր մարդկանց, այլ շեշտում է այն, ինչ տարբերում է նրանց և առաջացնում նրանց միջև լուծման սպասող ներհակություններ:

Հին, իդեալիստական աշխարհայեցության մեջ նա մտցնում է քննադատության ու վերլուծության սլայթուցիկ նյութը: Հասկանալի է, որ մարակոդ ու բողոքող նրա խոսքը պիտի ընդառաջեր հիմա հասարակության դարկված ու զրկված այն խավերին, որոնք տրտուենջի և բողոքի ձայն են լարձրացնում տիրող անարդարություններին ու իշխող աշխարհայեցության դեմ:

Նորի մի հակամարտ էր այդ հնի դեմ, որ
 ցայտուն արտահայտություն է դտել, մանավանդ,
 Ֆրիկի «Գանդատ»-ում: Բանաստեղծը գլտում
 է, որ սասծու ստեղծած աշխարհը լի է ազգերի
 ու լեզուների, դասակարգերի և անհատների
 սարակացություններով: Դժգոհ է, մանավանդ,
 որ հարուստների կողքին կան աղքատներ, սլա-
 բոնների կողքին՝ ծառաներ, ուսումնավորների ու
 արվեստավորների կողքին՝ անտաշներ ու անօգ-
 ներ, խիզախների կողքին՝ վախկոտներ:

Մէկն ի զըրկանացն հարբստի,
 Մէկն յիւրայնոցն աղքատասցի...
 Մէկին բախտ և զըրհնի,
 Ճախով նըստի ի պէտաւ ձի,
 Մէկն բորիկ և անվարտի,
 Յառջին հետեակ կու փախչի:¹
 Մէկն է ձեռաւք աննըմանի,
 Հասեալ ուսման և արուեստի,
 Հիմն արկանէ յատակ ծովի,
 Կամ ուրջ կապէ վերայ գետի,
 Մէկն է կերպիւ տընագելի,
 Է արտերես և աղտեղի.
 Մէկին ձեռուին է զերթ գողի,
 Որ ոչ կարէ պաղնել ջորի:²

Դառնալով մարդկային անհավասարության

¹ Դիվան, Հավելված Զ, 155—162: Հմմտ. Բանաստ.,
 ԼԼ, 123—126:

² Դիվան, ն. տ., 223—230: Հմմտ. Բանաստ., ն. տ.,
 187—191:

նման փաստերին, Վլասն թալեհի և բրջի՞ք բանե-
քում լանաստեղծը հարցնում է.

Կասեմ, թէ այս է՞ր Էդեր, որ դամէնն հաւար
չէ գուզած.

Ամէն ֆալաքին արարք՝ մէկին հաշտ, մէկին
խըռոված՝:

Մտնում են ապա նման հակադրումներով միջ-
նադարյան Հայաստանի ըմբոստանույզ միտքը
սչ միայն անդրադարձնում է էպոխայի իշխող
ներհակությունները, այլև գծավում ախտը հան-
րակարգի հետ: Ըստ երևույթին ֆրիկի այս շար-
քի գործերի վրա անդրադարձել են այն արա-
մադրությունները, որոնք հեղհեղվում էին Հա-
յաստանում և Վրաստանում էլխանական սեմի-
մի գեւմ Սուլթու-Ֆուզայի սպասամբության
ժամանակ: Մասնաշախտի գծգոհությունների ըն-
թացքից ծայր առած և հայ-վրացական զինված
ուժերի գլխավորած այդ շարժման պահին բա-
նաստեղծն ըմբռնում էր արգեն, որ անձնական
իր գծրախտությունների հիմնասպատճառը Եմա-
սասի՞ք վրիպած գործարքը չէ սոսկ, կամ երկրի
շահամուլ պաշտոնակալները, այլ՝ թաթարական
նեխված կարգերը.

Հիմիկ գրծարեց բաներս,

Որ թաթարն եղաւ թագասոր,

1 Դիվան, ԻԹ, 30-31: Հմմտ. Բանաստ., Լ., 28—29:

Ջրկեց դամենայն աշխարհոյ,
Ու գողերն եղիւր մեծաւոր¹։

Նա գիտակցում է հիմա, որ դուք է օգնութ-
յոյն սպասել ճաստվածագիրք» էլլիսաններէց կամ
խաշակիր իշխաններէց։

Ո՞ւր են թագաւորք երկրի
կամ իւրեանց զանձն ի սլահեստի²։

հարցնում է նա, և մի այլ տեղ ինքն իսկ տա-
լիս է սլատասխանը։

Յիշխան մի յուսալ, եղբայր,
Ճար չի կայ ի յազամորդուն.
Գրնա ծառայէ նորա (իմա՝ աստուծուն.—Ա.Ն.),
Որ աէր է անձին ու հոգուն³։

Այնուամենայնիւ միանգամայն վրիպած պի-
տի համարել Ֆրիկին կրօնավորի կնգուղ հագցը-
նելու համար նրա «Դիվան»-ը կազմող Տիրայրի
գործ գրած մոլի քանքը, թյուրիմացություն
դուրս եկաւ Ալիշանի բերած այն վկայությունը,
որ հիմք էր ծառայել Տիրայրին՝ վանական գաւձ-
նելու Ֆրիկին։ Ինչ որ ազդրուրից առնելով՝
Ալիշանը Ֆրիկի մասին գրել էր. «Էր սրգի թագ-
վոշին, եղբորսրգի Գոզանայի... որ ի վանս րա-
նասիրաց»։ Ինչպէս հիմա պարզված է՝ Ալիշանի

¹ Դիվան, Իէ, 19—20; Հմմտ. Բանաստ., XXXIX,
28—29;

² Դիվան, ԻԴ, 25; Հմմտ. Բանաստ., IV, 22—23;

³ Դիվան Ժէ, 17—18; Հմմտ. Բանաստ., III, 14—17;

տողերին ազբյուր էր եղել Հոսի Եւայոց հյու-
րանոցի» (այժմյանս Վլասս եկեղեցու) մի ձե-
սողերը, ուր Ֆրիկի ստանալորնեքից մեկի վեր-
նագիրը նշված է այս ձևով՝ «Ոտանաւոր աստ-
ցեալ է Ֆրիկն որդի Թագվորչին, եղբայր որդի Դո-
գանոյի [ի] վերայ իւր մեղացն, [ի] վարս բա-
նայսիրաց»¹: Եղծված «ի վանս» բառի տեղ «ի
վարս» գնկուց հետո՝ Տիրայրի տեսությունը
ջուրն է ընկնում իսպառ:

Կծու երգիծանքով էր խոստում Ֆրիկը ան-
բախտաներին մամքող «բախտալոր» սրբասացնե-
րի մասին, որոնց սակի նպովող լեզուն և սակու
վրա դողացող ձեռքը այնքան անհամերաշխ էին
միմյանց:

Անբախդն գայ ամաթալի,
Հեղ և հանդարդ, առաքինի,
Գայ և կանգնի կրտսեր գասի,
Անշուք, անշնորհք և անյարդի:

Բախդաւորն գա ճոճկրտալի,
Գայ և նըստի յաւաղ բարձի,
Լուծն ի վորին թէ շուրջ անցնի,
Ու գալէլու մի չի գիտնի:

¹ Տե՛ս «Հանգես տմսօրյա», 1953, եր. 310. Ն. Ակի-
նյանի գրախոսականը: Դիտենք, ի դեպ, որ իր այդ գրախո-
սականում Ակինյանը տալիս է Ֆրիկի հոր Թագվորչա ան-
վան ճիշտ պարզաբանությունը: Այդ անունը պիտի կարդայ
«Թագվորչահ»: Անվան այդ ձևը նույնքան օրինաչափ է,
որչափ, ասենք, միջին դարերում գործածական «Սուլթան-
չահ», «Մեղիքչահ», «Ալամչահ» և այլն:

Բայց վասըն մէկ աւուր տաւնի,
Որ թէ զաօրիկ և ծնունդ լինի,
Նայ, խաշհամբոյրն իւր շատ ընկնի,
Մորթ և էրի և զաթանի¹։

Միայն ադետ ու պորտապարար կզերը չէ, որ
կենթակա է բանաստեղծի երգիծանքին։ Մի ալ
տեղ նա հեղնում է անգամ վանական ուսում-
նատութ յաւնն ու գիտութ յաւնր։

Ֆրիկն ինչ հող է կամ մոխիր,
Բը հանց գոհար բան շարէ նա,
Ո՛չ ծառայել վարդապետի,
Ո՛չ կարգացել է օրիկ մի նա։
Ոչ ի հաւրէ առեր մըրաթ,
Այս յասաուծոյ տուած նորա,
Նա էրր կարէ հանց բան առեր,
Որ ով կարգա՞ աւրհնէ ըզնա²։

Բանաստեղծը սկսում է գիտակցել նաև, որ
պատակաւորաբար ու անիրաւի կարգերից տասապոյ
քրիստոնյա աշխարհը անկարող է տակաւին գի-
մադրել անօրենների բանատիրութ յանը։ Նա լսել
է Արևմուտքի գիտութ յան համբաւը, բայց աչք
չի գոցում նաև Արևմուտքի տարածուն խալա-
րապաշտութ յան վրա։

Չոր դուք գիտուն ազգ կու գիտէք,
Նորա այլ խիտ մեղաց տէր են,

¹ Դիվան, Հովելլված 2, 187—198, Հմմտ. Բանաստ.,
XLI, 151—162։

² Դիվան, է, 69—72, Հմմտ. Բանաստ., XXI, 131—138։

Հաւատք ունին սլայժառ գերդ լոյս,
Բայց զխաւարըն հու սիրենն¹:

«Վասն անմխարանութեան քրիստոնէից» բան-
քում մեր առաջ մերկանում են քրիստոնյա
ֆրանկների դեմքերն ու հոսում կղերի արարք-
ները, նրանց գավազանակախիլը, զոշաքաղու-
թյունը, սխմոնականությունը, կրօնական անհան-
դուրժամությունն ու մյուս արատները: Կաթս-
լիկ եկեղեցու պետերը հալածում են «հերձվա-
ծողներին», ատում այլադավան քրիստոնյանե-
րին: Ձրիկը վեր է հանում մասնավորապես հույն
եկեղեցականների վերաբերմունքը դեպի հայերը:

Ֆրանսիացի խե անթատղիր,
Ըզպոզնկելըն մեզք չասեն:
Հոռոմըն խիտ ամբարտաւան,
Հայու՝ ֆրանզին շուն կու ասեն²:

Ձրիկը մատնանշում է պետությունների փո-
խադարձ թշնամանքն ու նրանց երկպառակու-
թյունները:

Ամէնն տողը են միմեանց,
Բեստէ աւտարք ըզմեզ կոխեն,

1 Դիվան, 2, 7—8: Հմմտ. Բանաստ., XXXIV, 7—10:

2 Դիվան, 2, 10—11: Հմմտ. Բանաստ., ն. տ.,
13—16: Գուցե այս տողերից սլարզվում է Մատթեոս Ուո-
հայեցու (Ուռհայեցի, էջմ. հրատ., 180), ավելի ուշ՝ Հա-
կոբ Կարնեցու. («Տեղեկագիր Վերին Հայոց», եր. 52) պատ-
մած միջագետից հայտնի հայհոյանքի քաղաքական բուն
իմաստը: Սակայն, ավելի հավանական է Ձրիկի վերջին
տողը կարգալ՝ «Հայ ու ֆրանկին շուն կու ասեն»:

Գեւմ բրիստոնեայք մեծ մեղուց են,
Որ հանց յերկար դար կու քաշեն...
Թագաւորքն չը հաշտին,
Հետ միմեանց սի կու պահեն,
Հանապուղ զար ժողովեն,
Եւ զմիմեանս ի սուր քաշեն¹։

Այս փաստերի դիմաց բանաստեղծի միտքը սուղվում է տարակուսանքի անդունդը.

Երբ որ հովիւ քն են մոյրած,
Ըզցրուեալ հաւտս անց ժողովեն².
Ապա ինչ ցեղ յառաջ երթան
Դէմ թշնամոյն կամ անց յազմեն...³
Երբ յիրար չեն ի հաշտիլ՝
Ձատտուած որով հաշտեցընեն...
Ինչպէ՞ս հաճէ աստուած ի մեզ,
Կամ չի թողու, որ հարածեն...⁴

հարցնում է բանաստեղծը։

Այստեղից մի քայլ էր դեպի պալլիկյաններին և թոնգրակյաններին միտքը, որին, պիտի կարծել, խաղառ անհաղորդ չէր նաև ձերիկը. եկեղեցու հովիվները չէ, որ միջնորդ պիտի լինեն մարդու և տտածու միջև — խորհում էր նա։ Փըրկուծյան կամուրջը եկեղեցու միջնորդությունը չէ, այլ մարդու համալտար։

¹ Դիվան, 2, 23—24 և 29—30; Հմմտ. Բանաստ., XXXIV, 19—29 և 31—34;

² Դիվան, 2, 35; Հմմտ. Բանաստ., ն. տ., 43—44;

³ Դիվան, 2, 69; Հմմտ. Բանաստ., ն. տ., 91—92;

⁴ Դիվան, 2, 53 և 50; Հմմտ. Բանաստ., ն. տ., 59—60 և 65—66;

Միջնորդ ընդ մարդ և ընդ աստուած,
Այսօր իսկի սլատճառ չի կայ...
Ով հաւատով յինքըն գիմէ,
Նորա զըթոխք իսկի չի կայ¹:

Բանաստեղծը հուսահատ չէ և ոչ իսկ հոսեակետ. նա հավատացած է, որ վերջ պիտի լինի անիրավություններին ու անարդարություններին. դառնալով մեծատունին, նա գրում է¹

Նախ ու նասիֆ, քեմխայ ու սաւֆ,
Կուլիստանիքն, որ զու հագար,
Բարձր ևս նբտէր ի վրայ խալուդ,
Յետև տի գոս աղկից ի վար²:

«Ընդդէմ ֆալաքին» քերթվածքում նա ասում է.

Յորժամ չարխն ի յեա քակուի
Ու ձդէ ըզաչք ի խոլոր
Ոչ թուխթն ոչ զալամ օղնէ
Ոչ հարիւր հագար ձիաւոր,
Տայ ի վիղն ի վայր ձդէ,
Չի մակ զոչ ոք թագաւոր³:

Անձնական ողբերգությունը սրում է բանաստեղծի քաղաքական ներհունությունը, լարում նրա միտքը թագավորող բռնության դեմ, դարձնում խռովահույլ նրա խոսքը ժողովրդի ազատության և երջանկության համար մզվող պայքարի կարուկ սուր:

¹ Դիվան, է, 24 և 39: Հմմտ. Բանաստ., XXI, 41—42 և 71—72:

² Դիվան, ԽԾ, 17—20: Հմմտ. Բանաստ., XXXI, 15—18:

³ Բանաստ., XXXIX, ժան. 41: Հմմտ. Դիվան, Իէ, 28—29:

Նա խորհում է աիրող շարիքներին անցավորութեան մասին. մարդկային կյանքի անկայունութեան հանգեալ անդոր է գույքի, փողի կամ բռունցքի իշխանութեանը: Համազված է, որ վերջ պիտի ունենա նաև թաթար բռնատիրութեանը.

Այս այլ չի մընայ հանցեղ,
Ու ֆալաքն ոչում կարեոր,
Զարնու և ձըդէ ի վայր՝
Չհամարէ զոչ ոք թագաւոր¹.

VIII

Ճրիկի քաղաքացիական հայացքները, նրա հասարակական-քաղաքական ձգտութիւնն ու իդեալները շարունակում են պարուրված մնալ միջնագարջան աշխարհայացքի շամանդազում: Նրա գրվածքներին իդեալական լեյամտալիք կյանքի ու մահի կրոնական-քրիստոնեական քմբոնումն է: Մի վայրկյան անգամ չի թողնում նա տառծու փեշը, անգամ այնտեղ, որ արանջում է նրա գեմ: Սորհում է՝ արարչապարծութեան և անօրինականութեան, աստենի ու անգենի, գժսւքի ու անեծքի, գայթակղութեան և զզջման կատեղորիաներով:

Հատկանշականն այն է միայն, որ Ֆրիկի ստեղծապարծութեանները ստանում են հիմա

¹ Դիվան, Իէ, 21—22: Հմմտ. Բանաստ., XXXIX, 30—31:

նոր, այժմեական՝ աշխարհային, գեմակրատա-
կան լիցք: Նրա հաւյղերն ու ապրումները, կրո-
նական համազգեատի մեջ իսկ սկսում են առ-
ջորվել երկրավոր, հասարակական համաժողո-
վըրդական ու համամարդկային հույզերով ու
բողձանքներով:

Նրա պատկերած տատվածք բարի ու սղորմած
է միայն, այլև ցասկոտ ու վրեժխնդիր:

Կարգացեք Վրարի աստծուն՝ ուղղած նրա
գիմուճը.

Դն. արդարոյ քաղցր ու բարի,
Մեղաւորաց հուր և կըրակ,
Դու ազբատաց ևս սղորմած
ևւ զբրկողաց տաս փոխանակ:
Դու ցըրուելոց ևս ժողովոյ,
Ուրոց՝ և աշբեաց ևս դու պահակ,
Դու խոնարհից բարձրացընող,
ևւ հըգորաց կաս հակառակ¹...
Դու կործանես բղձնամին,
Եւ ճատպաշտից դու տաս պըսակ,
Դու խոտոացար զանանց բարին,
Ձիւս կամեցիր դու բեզ մշակ²:

Չտալայիներէլով միայն աստծու ճարդար ու
յիրաւիճ պատաստանէն, իր գծագրած պատկեր-
ների մեջ բանաստեղծը ինքն իսկ «գժօխք» է
փոխադրում բոլոր այլ հոսքներին ու զբկողներին:

¹ Դիվան, ԼԳ, 28—35: Հմմտ. Բանաստ., XXIII,
27—31:

² Դիվան, ԼԳ, 312—315: Հմմտ. Բանաստ., ն. տ.,
311—314:

Անճնական վրեժի միջոց չէր գժոխքի հավերժա-
կան հուրը, այլ հարստահարվածներն ու ճնշված-
ների գատատան: Հատուցման այն վայրն է
այդ, ուր վերջին կատակլիզմի պահին պիտի
կարկամեն Խիրոզ կարգերի «քաջախոտքը», խո-
նարհեն «քարձր ու հզորքը», մայի, մուլգի,
խաղնայի բալոր տոպեաները: Այլուեղ է, որ՝

Ձինչ դու այոց ես կամեցիլ,
Քո առաջին կամին բերել...¹:

Ֆրիկի բանքերը լի են գժոխքի անեղ ակ-
ոարաններով:

Ջանք դիր * և ազատէ ըզբեզ, մինչդեռ կառ դու յայսմիկ
հատակ,

Թէ չէ յատակես յէզուց՝ հանց լինիս զինչ գողն
ի փըլհակ...
ի փըլհակ...

Որդունքն ծրծեն զարիւնդ այն կարմիր զինոյն
փոխանակ,

Այն տաք տըներուն փոխան, բուխէրիկ վառեն
բեզ կըրակ:

Խորվեն զինչ առաճ ըզբեզ, զինչ կաքաւ ու զինչ
ճնապաստակ,

Ուտեն ըզմարմինըք քո ու տանջիս զինչ ձուկն
ի տոպակ:

Այս են քո մեղաց որդունքն, որ տընկել էիր
բեզ գուակ:

Պահեալ սընուցիր զնոսա՝ զալըսականըք քո ունին ակ:

¹ Դիվան, 19, 56—57; Հմմտ. Բանաստ., V, 54—55:

² Դիվան, 19, 26—27 և 30—35; Հմմտ. Բանաստ.,

Անմար այս գեհնինն լսանաստեղծը դատապարտում է բոլոր նեղիչներին, իսկ դժօխքում տաղանկիտղ հարուստին նա ուղղում է այսպիսի հարցում.

Ո՛ւր է քո սփի կապան, որ ծառայքն ի թե՛ն անուին,
Ո՛ւր է փափուկ անկողինդ, որ զիշերքն քեզ փռէին:
Այսօր ոչ կապայ ունիս, ոչ անկողին՝ մէջն ի հողին,
Յայդուց՝ հոր ու բոց ամեն ի բերան բաւաշ խմողին:
Ո՛չ դուսար, ո՛չ որդին օգտէ, ոչ գնկան իւր

վաստակողին.

Յորժամ յարութիւն լինի, չունենաս զպղտուն
դատողին:

Մինչ խելբոց ի վերայ է գեռ, դու քակէ ըզգժոխքն
ահագին,

Եինէ անգեներն դարպաս ու դընէ գըրախտ մեծագինն:

Չար ուղիներով երկրավոր բարեկեցություն նվաճելու հեռանկարներ ձեր ժամ է Քրարի գործերով՝ երկնավոր դրախտ ու դարպաս գնելու խրատ: Այս է հեռեում Ֆրիկի հանձնարարություններից:

Սակայն Ֆրիկը չի գոհանում իշխող մտայնությունն արտացոլող հման խրատով: Նա չի խստատանում մարդկանց միայն երկնային հատուցում, այլև մատնանշում է նրանց «բախտի» հնարավոր շրջումը երկրի վրա, դժադրում նրանց համար բարեկեցության «աստեղնական», աշխարհային ուղիներ, Չեականորեն դատելով, նա շրջագարձ էր կատարում դեպի կենսահաստիչ այն

1 Դիվան, 1, 2, 32—39: Հմմտ. Բանաստ., XXII, 35.—42:

աշխարհագրացումը, որով նշված էր նրա կյանքի
առավտար, «քաղաք ու դարպասնի» կառոււելու
նրա ցնորքների ժամանակաշրջանը: Այնուամե-
նայնիվ նոր նրա կենսահաստոււմը սկզբունքորէն
տարրեր է երկտասարգ տարիների անձնագրու-
տան կենսագրացումից: Անձնական երջանկու-
թյունը չէ հիմա նրա սրտնւածը: Մարդու ճշմա-
րիտ բարեկեցությունն ու երջանկությունը հիմա
նա լծորդում է ամենքի բարեկեցության և եր-
ջանկության հետ, որ հիմնոված չէ ճորտերի ու
ծառաների շահագործման վրա: Հարկաւ, սոցիա-
լական մի ուտոպիա էր այդ, որ հետու էր սո-
ցիալիստական լինելուց: Գյուղատնտեսական և
արհեստավորական մանր անասությունների
վրա հանգչող ֆեոդալական հարարերությունների
սոցիալիստներում փրկիլը կամ նրան ժամանակա-
մերձ սրեւ ուրիշը անկարող պիտի լինելին հան-
գելու արտագրության սոցիալիստական կազմա-
կերպության մտքին: Նրա հասարակական իզեալը
ավելին չէր, քան գեմսկրատական հավասարա-
կանություն-էգալիտարիզմ՝ խորսխոված անհա-
տական աշխատանքի և անհատական տնակու-
թյունների ազատ կենսագործման սկզբունքի
վրա:

Փրկին այնուամենայնիվ, զգում էր անհատա-
կան ջանքերից գերազոր և այդ ջանքերի քն-
թացքը սրտշող արտացի, մարդու կամքից ու
գիտակցությունից դուրս գտնոված ինչ որ ուժերի

ու գործունեերի առկայութեանը: Եվ հենց դրանց իմաստաւորման շուրջն են դառնում շրջագար-
ձային նրա քերթիվածքները: Նա դրվատում է
մարդու մտաւոր շնորհքը, նրա լեզվի ճարտա-
րութեանը: Վեր հանելով իր գրածներին արժա-
նիքը, նա չի համարում դրանք հորից ժառան-
գած հարստութեան կամ որևէ վանքում ստաց-
ված ուսման արդյունք:

Բայց բավական չէ սոսկ մարդու շնորհքը,
նրա կատարյալ միտքն ու խոսքը: Նա սրտնում
է նրա մեջ նաև բարոյական կատարելութեան:
Հարկավոր է, որ մարդս ունենա հոգու գանձ,
չսրտի ախանջ՝

Երբ սրբաի ախանջ ունիք
Քան զզբխոյ ախանջն աւելիք¹,

ասում է նա:

Նա գիտէ, որ չկա կատարյալ բարիք առանց
բարի գործի: Ոսկերարձ երկրատնուց կամ ան-
գևա գանձավորից հումանիտա բանաստեղծը
երևա է շուռ տալիս դեպի պայծառութեամբ ու
սրտի ջերմութեամբ օժտված մարդու բարի
կամքը:

Նա ծագրում է նրանց, սվքեր մարդկանց չար
արարքը վերագրում են ստատանայի ներշնչմանը:

Չարը, ասում է նա, ստատանայի գործ չէ, այլ
մարդկային չար մտքի ու չար կամքի արդասիք:

¹ Դիվան, Ի, 52: Հմմտ. Բանաստ. V [1], 90-91:

Զչարըն քո կամաւ դործես՝
 Ըղսատանայ սլատճառ դընես,
 Եղբայր, քեզ երդումըն տամ,
 Սատանայ դու երբ տեսեր ես:
 Սաս, թէ ինչ կերպ ունի
 կամ ի յնւմ բերնէն լըսեր կո,
 Դու գմխաքղ սատանայ զուղես,
 * Ի յաշխարհս ի շուռ կու ածես¹:

Սահիր-Դիվանների ուժի և խարկանքի մի-
 ջոցով ձեռք բերված բարեկեցության իրկալին,
 «բարու և չարի անդին» միտված նրանց կաու-
 կենարտն էթիկային ու բարոյական սանձարձա-
 կության սկզբունքին Ծրիկը հակադրում է սո-
 ցիալական իր էթիկայի իմպերատիվը՝

Զաղէկն որ քեզմէն ուղես՝
 Ամէնի հաւտար կամենաս²:

* Իչ է բարի կամեցողությունը», հարկավոր
 է բարի գործ: Բանի որ՝

Գործով երևի խելաւքն, ասելովըն
 չապրի մշակ³:
 Ինձ ասես. «Ծառայ բարի,
 Եկ հաւասար քեզ վարձ կուտամ»:
 Ես ասնում ուրախութեամբ,
 Ընդ իմ եղբարսըն միանամ⁴:

¹ Դիվան, Լ, 26—29: Հմմտ. Բանաստ., XXVII, 42—49:

² Դիվան, ԽՍ, 36: Հմմտ. Բանաստ., XXXV, 64—65:

³ Դիվան, ԻԾ, 45: Հմմտ. Բանաստ., VII, 43:

⁴ Դիվան, Գ, 65—66: Հմմտ. Բանաստ., X, 124—129:

Հմմտ. նաև Դիվան, ԼԳ, 316—319 և Բանաստ., XXIII, 315—316:

Փրկիլը գիտակցում է ի վերջո, որ մտքի ու սրտի կատարելագործումը կամ գրանից բխած անհատական բարի գործը չէ սոսկ, որ պայմանավորում է ախրոջ կամ ծառայի բարեկեցությունը:

Նա հանգում է այն իմաստության, թե մարդկանց ձևական հավատարությունը, կամ նրանց անձնական արատն ու առաքինությունը կամ նրանց կամքն ու կարծիքը չէ, որ ղեկավարում է աշխարհը: Մարդկային գործունեության արդյունքը կախված չէ սոսկ գործողների անձնական ունակությունից, նրանց ձգտումներից ու ցանկությունից:

Թէ ճարտարութեամբ ուտէ մարդ ըզհացն զինչ իւրն
է տըւած,

Տըխմարն յաշխարհիս վերա չի պիտէր մեկ օր
ապրած:

ասում է նա¹:

Նույն այս միտքն է հենց, որ արծարծում է նա «Ֆիլաքի», «Բաստի», «Հարլսի» պատկերներով:

Ձի թէ թագաւոր է ի թախթի,
կամ քահանայ է ի բեմի,
Եւ կամ իշխան է արքունի,
կամ որդի մեծ թագաւորի,

1 Դիվան, ԻԹ, 10—20:

Ու ինք դաւլլաթ և բաղդ շունի,
Եւ ոչ շքնորհ խաւսակարգի,
Նա՛յ, թող հեղեղն ըզնա տանի,
Քարէ կարկուտն այլ աւելի՛:

Անհատական ձիրք ու շնորհքին հակադարձ
«դուլլաթ և ըսխալը», ըստ էութեան՝ դա անհա-
տից դուրս կատարվող իրագործութեաններին
կամ նրանցից դուրս ելած իրագրութեան պրի-
մատն է հասարակութեան առանձին անդամի
հանդեպ: «Բախտի», «դուլլաթի» կամ «թալէնի»
նշումով փրկիլը բեկուում է իր ուշագրութեանը
մարդու անհատական կամքից, նրա սրտի ու
մտքի կարողութեանից անկախ արտաքին հան-
դամանքներին կամ արտաքին աշխարհի ներգոր-
ծութեան վրա: Միշտ ավելի ու ավելի էր հեռա-
նում նա մարդուն վրկագործող «լույս աստու-
ծո» մասին ունեցած նախընթաց պատկերա-
ցումներից և սկսում էր միտքը մարդու իրա-
կան վիճակի ու նրա շոշափելի շրջագրութեան
վրա: 13-րդ դարի էյխանները և ամենից շատ
Ղազան խանը հովանավորում էին «արտաքին
գիտութեաններին», մանավանդ մաթեմատիկայի,
աստղագիտութեան ու բժշկութեան սուսում-
նասիրումը: Կառուցվում էին նոր աստղագի-
տարաններ՝ կատարելագործված գործիքներով:

¹ Դիվան, Հավելված 2, 170—186; Հմմտ. Բանաստ.,
XL I, 143—150:

գրվում և թարգմանվում տիեզերագիտական
 գրքեր¹։ Աշխարհիկ գիտություններով շարունա-
 կում էին հետաքրքրվել նաև հայ գիտունները։
 Մասնավորապես հայտնի են Հովհաննես Երզն-
 կացու տիեզերագիտական զբաղմունքները։ Աշ-
 խարհիկ և «հերձվածողական» միջավայրում
 տիեզերագիտական գիտելիքների տարածումը
 նանգում է Երկնքի և Երկրի, «աստեղի» ու «ան-
 գեղի» հակադրությունների վերացմանը, գժոխքի
 ու արքայության ժխտմանը։ Տակավին Շնորհա-
 լին էր ատարկում հայ այն հերձվածողներին,
 որոնք ասում էին, թե Շոշ գոյ գրախան աստու-
 ծոյ, զոր գրեաց Մովսէս, և ոչ ծառ կենաց, և
 ոչ ծառ գիտութեան, և ոչ պտուղ նիւթեղէն,
 զոր Եկեր Ագամ, այլ օրինակ միայն գրեցան
 այսօքիւն²։ Իր քարոզներից մեկում Վարդան
 Այգեկցին գատապարտում էր նրանց, ովքեր
 պնդում էին, թե չկա տոհմատարակ մեղքերի հան-
 գերձյալ հատուցում, չկա հարություն և գժոխք։
 Այգալիսիների ասելով, հարում էր Այգեկցին,
 գժոխքը այլ ինչ չէ, քան՝ «սուտ սպառնալիք
 միայն, որպէս և կարծէն տգէտք և մեղաստէրք

¹ В. Бартольд, Улубек и его время, СПб, 1918,
 кр. 5, և Рашид-ад-дин. III, 206 և հտ.։

² Ն. Շնորհալի, Թուղթ ընդհանրական, ս. էջմիա-
 ծին, 1865, կր. 366 և հտ.։

և աստղաբաշխք և այլք, որ կարասկտոց են
Նեոխն»¹:

Տաթևացին «հերձվածողներ» էր համարում
նրանց, ավքեր նշանակութուն էին տալիս բախ-
տին կամ ճակատագրին: Այգայիսիները, ասում է
նա, ժխտում են մարգկային կամ քի ազատու-
թյունը և ամեն ինչ կապում «հարկի», աշխինքն՝
անհրաժեշտության հետ²:

Անհիմն կլիներ եզրակացնել, թե Ֆրիկի հա-
յացքը ճակատագրի կամ բախտի մասին կապ-
ված էր «հերձվածի» կամ աստղագիտական որևէ
ուսմունքի հետ: Նրա մաս դա հնից եկող և
սոցիալ-քաղաքական նոր իրադրություն մեջ
աշխուժացած մի պատկերացում էր: Նրա բախտի
«չարխը» պատում էր ասածս հրամանով: Նշա-
վակելով բախտը, նա քաղաքիված ձևով նշտալա-
կում էր ասածուն, որի հրամանին ենթակա էր
մարգկային բախտի քմայքը: Բախտի և ասածու
հանդեպ Ֆրիկը հլու բնկալողի գերում չէ, այլ
լմբոսա բողոքողի:

«Ընդդեմ ֆալսքին» և մանավանդ «Գանգատ»
բանքերը բողոքի պոթիումներ էին և միա-

¹ Լ. Ք ա չ ի կ յ ա ն, Ազանգավորական գաղափարախո-
սությունը Հայաստանում 12 - 14 դարերում: ՏԵՍ ՇՆ, Մառի
անվան կարինեոի աշխատություններ», ԱՅ 2, Երևան,
1947, եր. 197:

² Գր. Տ ա թ ի ա յ ի, Գիրք հարցմանց, Կ. Գուլիս, 1723,
հատոր 1, եր. 7 և հա.:

ժամանակ՝ քաղքենի մաստաների կրած հու-
սասարությունների հայտարար: Գրանք բանա-
սակցմական մտքի ընդհանրացումներն էին,
որոնց միջոցով մերկացվում էին մարդկային
պատմության մեջ գրեկորվող ճատվածային
աշխարհավարության հակասություններն ու
անարդարությունները:

Եթե մինչ այդ Կրիկը գիտում էր իր և ուրիշ-
ների տատապանքը սրպես ճարդար և իրավ
հատուցում, հիմա ինքն է բռնում արդա-
րագրասության կշեռքը, հաշիվ պահանջում ա-
ռածուց նրա սակզմած աշխարհի և մարդկանց
ներհակությունների ու զրկանքների համար:
«Բախտի» և «Փալաքի» մեջ նա անձնավորում
էր հասարակական ախրող հակասություններն
ու անարդարությունները և սրանց համար հաշիվ
պահանջում ասածուց: Հայերի կրած տատա-
պանքները նրանց մեղքերի հատուցում համա-
րելու փոխարեն, Կրիկը սկսում է ընկալել սր-
պես ասածու անատարհերության նշան: Միջնա-
դարյան իշխող մտայնությունը սպասնում էր
շրջվել գլխիվայր. իշխող գասակարգերի քա-
րողած հայացքների հանդեպ զուխ էր բարձրաց-
նում ճնշված ու կեղեքված մաստաների՝ ա-
տրծու դեմ ուղղված բողոքը: Զուր չէ, որ ըստ
բավանդակության այնքան համահնչուն ևն
«Ընդդէմ ֆալաքին» և «Գանդատ» քերթվածք-
ները: «Փալաքի» միջոցով աստված դատում է

մարդկանց ոչ թե ճայն՞, այլ ճայս՞ կյանքում:
Ինքը, Ֆրիկն իսկ, ֆալաքի անունով է գուշա-
կում հարստահարողների ու ճնշողների հան-
դերձյալ կործանումը: Բայց զրանով հազիվ թե
արդարանում է «բախտը» կամ «ֆալաքը», կամ
անատրակուսկի դառնում ասածու ճարդար և
իրավ՞ տնօրինությունն ու դատաստանը: Չի՞
որ այդ հուշն ճարխի՞ կամ «ֆալաքի՞» մասին
է բացագանչում բանաստեղծը՝

է՛յ չարի, ամ քեզ անց աւտամ...

Ոչ դաւը ոչ երդումն ունիս՝ և ոչ հաւատ,

ո՞վ դու նենգաւոր՝

Կամ՝

է՛ր չես դու աններ ուղորդ դատաստան

է՛՞ ծուռ դատաւոր՝

Ֆրիկը չէր վստահում ծուռ ու նենգ հոշա-
կելու ասածու դատաստանը: Բայց բողոքելով
ասածու տնօրինությունների դեմ՝ կասկածի տակ
է ասում ասածու արդարամտությունը, ասածո՞
որ տիրող պատկերացումներով տիեզերքի դե-
միսւրդը չէր միայն, այլև նրա բարեխնամվա-
ծության սղորջուրը: Այն սկեպտիցիզմն էր
այդ, որ պատմականորեն կանխում է մտքի
ազատագրմանը: Թեպետև ասածու տնօրինու-
թյունների դեմ ուղղած Ֆրիկի արտունջը կամ

1 Դիվան, Իի, 23—24; Հմմտ. Բանաստ., XXXIX, 34—37:

2 Դիվան, ն. տ., 39; Հմմտ. Բանաստ., ն. տ., 66—67:

աստժո արդարամտության մասին հայտնածը
դրանց գոյության բացահայտ ժխտումը չէր,
գեթ առաջին քայլն էր, ուղղված օրյեկտիվներն
դեպի այդ:

Ֆրիկի սկեսպիկ միտքը նույն այս եզանա-
կով հարցական է դարձնում ոչ միայն աստժո,
այլև սատանայի բիրլիական-գաղափարը:

Ճիշտ է, որ նախապաշարումի իներցիան, ի
վերջո, կարծես իջեցնում է ֆալսաք-աստժո դեմ
ուղղված բողոքի թափը, լսելի դարձնում նրա
զղջումի մեղեդին: Բայց այդ տեղի ունի, երբ
տրդեն մերկացված են ֆալսաք-աստժո կույր ու
անիրավ գործերը, բացահայտված կողիտ ու դուհ
Երախտավորներին՝ հարստահարչական մտութր,
ճնշող նրանց թաթերը կամ ճզմող նրանց ճան-
կերը: Այդ բոլորից հետո է, որ տեղի տալով
մարդկանց ա՛ն ու սարսափի մեջ պահող ֆան-
տաստիկ ուժի առաջ՝ բանաստեղծը քրիստոնեա-
բար վեր է առաքում խոնարհ իր հարցումը.

Իմ տէր, արա՛ պատասխանի
Ես քեզ մեղայ, որ գայս ասի.
Ձի ո՞վ եմ ես, մարդ աղտեղի՞
Համարձակել քո առաջի:
Բայց ինձ ներեա՛, ո՞վ հայր բարի,
Դասեա՛ ի գունդքս քո հաւտի,
Եւ քեզ պտտիւ յամենայնի
Այժմ ե յաւէտ անլուծի՛:

1 Տես Գիվան, Հովելված Է, 217—224: Հմմտ. Բա-
նաստ., փոխոխակ 11 210—217:

Համարձակ մերկացումից հետո՝ «Գանգատի», ինչպես և «Լնդդէմ ֆալաքին» բանքի հեղ վերջվածքը հնչում է որպես դառն հեղնանք: «Գանգատ»-ը, ինչպես և «Լնդդէմ ֆալաքին»-ը ընթերցողներին կողմից պիտի ընկալվելին որպես շրջադարձ գեպի նոր, կենսահաստատիչ մի իմաստասիրություն, որը ժխտելով արտող կարգերի իրավացիությունը, միաժամանակ տարակուսանք էր առաջացնում դրանք նվիրագործող կրոնա-ֆատալիստական իշխող աշխարհայեցության նկատմամբ: Ավելին, այդ քերթվածքները հնարավոր դարձան տիրող աշխարհայեցության և տիրող կարգերի գեմ բարձրացած աջամադբությունների շնորհիվ:

IX

Չենք կարծում, թե անկորուստ պահվել կամ հայանագործված են Ֆրիկի բուլբու երկերը, նրա բովանդակի դրական ժառանգությունը: Հարկ կատակավին որոնել գարերի փոշով ծածկված և թերևս առանց բանաստեղծի անվան դրական շրջանառության մեջ մտած նրա «հայերեն մասալ ու առակները», որոնց մասին ակնարկում է ինքը: Տրամադիր ենք կարծելու, թե «հայրեններով» գրված գործեր պիտի կցած լինեն դրանք, հագեցած ժողովրդական բառ ու բանով, ժողովրդի իմաստասիրությամբ, գեղարվեստական ուրույն

մշակումով ու հորինվածքով: Ինքը, Ֆրիկն իսկ
տալիս է կարծես գիդակտիկական հպատակով
գրված իր այդ գործերի բնութագրությանը:

Շատ մի հայերէն բաներ խորհրդով՝ զըբախտ արնկեցի,
— ասում է նա՛, կամ՝

Որ չէ այլոց բանքս ասացած.

Զինչ ըզձագիկ եմ ժողովեր,

Բան ըզմարդարիտ ղայձառ զարած՝:

Այս կարգի գործերից է հավանորեն «Տաղ
Ֆրիկան ասացեալ ի վերա կզբայրաստանին»
քերթվածքը:

Դժբախտարար, չենք կարող ասել, թե բանասիրական տեսակետից բավականաչափ հետազոտված և լուսարանված են գեթ բանաստեղծի առկա երկերը: Նրա մեզ հասած քերթվածքներն իսկ զուրկ չեն ակնբախ ազճատումներից, տակավին մեթ կամ անհասկանալի գարձած սողերից: Հավելումներով ու հաղափումներով ազճատված կամ անհասկանալի-գարձած տողերը հաճախում են մանավանդ Ֆրիկի այն գործերի մեջ, որոնք առավել սիրված ու տարածված էին, ուստի և առավել կոպիտ կղծումների ենթակա:

Ֆրիկի երկերի զբուլթյան հանգամանքների զանցատումը և, մասնավորապես, առկա հրատարակությունների մեջ ժամանակագրական հաջորդականության խախտումը լուսն-

1 Դիվան, ԻԴ, 49: Հմմտ. Բանաստ., IV, 46:

2 Դիվան, ԺԱ, 266—267: Հմմտ. Բանաստ., XI, 262—263:

գարուճակ են հասկանալու բանաստեղծին՝ նրա ժամանակի կոնկրետ հեռնախորքի վրա և, մանավանդ, նրա վերապրած հասարակական գրամայի կապակցութեամբ: Ասանց ժամանակաբանական ուղեցույցի՝ բնթերցողը կարող է մտլորվել առկա նյութերի բովանդակում: Մինչդեռ դժվար է առաջացրել մի ուղեցույց, եթե ճիշտ տեղագրենք գեթ Ֆրիկի «գարձակեամային» գործերը, ելնելով նրանցից, թե հեղինակի կյանքի ու ստեղծագործութեան կամ հարափոփոխ նրա շրջապրութեան ո՞ր մասնան է արտացոլված գրանց մեջ:

Այսպես, բազմաթիվ այն քերթվածքները, ուր բանաստեղծը խոսում է իր գերութեան, որդու գերեարութեան, կին ու բարեկամ չունենալու, վանք մտնելու ցանկութեան, զստամութեան և նման այլ բաների մասին, գրվել են ավելի ուշ, քան այն գրվածքները, ուր չընկնելով աշխարհամերձ հուստեսութեան վիճը, ասարկերանշում էր իրարից խզմիտ և անխիղճ վաշխառուններին, լավ և վատ թագավորներին և այլն: Նույնպես և մի շարք այն գործերը, որոնց մեջ իշխում են կրոնական աշխարհազգացութեան արամազրութեաններ, ուր բանաստեղծը սրունում է իր հագին և միտքը ամբողջ աստվածային գոհար, մարգարիտ, լույս, սեր և այլն, գրվել են ավելի վաղ, քան այն գործերը, ուր փորձում է փարատել սոցիալական և տիեզերա-

կան ազջամուղջը, երես դարձնում ճազատարարձ
թագավորներից, շրջադարձ կատարում դեպի նոր
իր իմաստասիրությունը՝ ասածու, բախտի կամ
ֆալտքի մասին:

Վերին աստիճանի կարևոր է այդ բանաստեղ-
ծությունների ժամանակաբանությունը: Ստույգ
է, որ «Վասն Արղուն գանին և Բուզային» քերթ-
վածքը գրված է 1289 թվականին¹: Այդտեղ է,
որ նա խոսում է մասասի հետ կապված քսան-
ամյա իր տառապանքների մասին: Այս նշանա-
կում է, որ մասասչիության հետ կապված, և
զգջումի ու փրկագործման մասիվների շուրջը
դարձող նրա գործերը գրված են 1269 թվակա-
նից ոչ վաղ: Սակայն պարզ է, որ հեղինակի
տառապանքները և, մանավանդ, նրա «զգջումը»
պիտի սկսված լինեն ավելի ուշ, այն շրջանում,
երբ մասասչիությունը մակ էր արդեն «կրիտի-
կական» այն շրջանը, որ համընկնում էր Սա-
հիր-Դիվանի կյանքի վերջին տարիներին՝ մոտա-
վորապես 1280—1284 թթ. և Բուզայի էմիրա-
պետության և վեզիրության տարիներին՝ 1284—
1289 թվականների հետ: Ելնելով այն փաս-
տից, որ «Վասն Արղուն գանին և Բուզային»
քերթվածքը որպես ֆալտքի միջամտության
օրինակ հիշատակում է Սահիր-Դիվանի կյանքի
ու վախճանի գունեղ հակադրությունը, Մ. Արևզ-

¹ Հմմտ. Մ. Արևզյան, II, 545:

յանը կարծել է, թե այդ քերթվածքը պետք է գրված լինի հենց Սահիրի մահվան տարում, այսինքն՝ 1286 թվականին, երբ, ըստ Օրբելյանի, տեղի է ունեցել այդ գեղքը¹։ Բայց, նկատենք նախ, որ ճիշտ չէ Օրբելյանի հաղորդած թվականը. Սահիրի մահը տեղի է ունեցել ոչ թե այդ տարում, այլ գրանից երկու տարի առաջ՝ 1284 թվականի հոկտեմբերի 16-ին²։ Անկախ դրանից՝ 1284 կամ թեկուզ 1286 թվականին Պրիկը չէր կարող այնքան հուսախաբված լինել թաթարներից, ինչպես որ ակներև է այդ բանքից։ Այդ տարիներին թագավորում էր «աստվածազիր» Արղունը, որի մասին նա չէր կարող ասել, թե «գողերն եղիր մեծաւոր» կամ որ «Ֆալաքը» պիտի զարնե ու ձգե նրան, չհամարելով «ոք թագաւոր», քանի որ, անգամ 1289 թվականին նա ուներ զեռ այն հայացքը, թե՛

Ով կուռքն տայ թագաւորաց՝
Իւրըն բերէ կործանութիւնն³։

Նոր գիտակցության համեմատ. համար, ինչպես ասանք, հարկ եղալ, որ բանաստեղծը անցներ դաժան փորձությունների տարիներ, վերապրեր Բեյլաթու խանի (1291—1295) և

¹ Հմմտ. Մ. Արևիկյան, II, 512 և հտ.։

² Տես Рашид-ад-Дин, III, 116։

³ Դիվան, IԵ, 42—43; Հմմտ. Բանաստ., XXXVII, 41—42։

Ղազան խանի (1295—1304) ժամանակ Անդր-կովկասում արժարժված սոցիալական և քաղաքական ընդհանուր տագնապը, որի արձագանքներինց մեկն էր հենց «Ընդդէմ ֆալաքին» բանքի ըմբոստ իմաստասիրությունը: Աչքի առաջ տնկնալով այս, կարծում ենք, որ «Ընդդէմ ֆալաքին» բանքը կարող է գրված լինել միայն Արղունի մահից հետո, համենայն դեպս 1291 թվականից ոչ վաղ: Հավանորեն այդ երկը գրւիկց Քեյզաթուլի մահից հետո, Ղազան խանի վարչության սկզբում, այսինքն՝ 1295—1298 թվականներին, երբ վերջինս գեռ չէր ձեռնարկել նշանակալից իր սեփորմներին, չէր սկսել ոսյաթների և օտարազավանների նկատմամբ մեղմ իր ընթացքը: Արղուն խանի բանի վախճանը¹ և Քեյզաթուլ խանի սպանությունը², 1291 և 1295 թվականներին՝ Առանում, Բուսի մոտ տեղի ունեցած այս դեպքերն են հենց, որ առիթ տվեցին Ճրիկին ասելու, թե ֆալաքը զարնում և ձգում է անգամ էլխաններին, չհամարելով «ոք թագսուր»: Դրանք այն տարիներն էին հենց, որոնց մասին Ռաշիդ-ադ-դինի կոմպեկենտ վկայությամբ Անդրկովկասը չէր կամենում ճանաչել Ղազան խանի իշխանությունը:

¹ Ստ. Օրբելեան, 467:

² Рашид-ад-дин, III, 137:

«Ընդդէմ ֆալսաքին» բանքի ծագումը հասկանալի է «Վասն Արղուն դանին ու Բուդային» քերթվածքից հետո միայն, մինչդեռ սրան նախքնթաց համարելով «Ընդդէմ ֆալսաքին»-ը՝ Արեղյանը վերլուծում է այդ երկը՝ նախքան կմէկնարաներ «Վասն Արղուն դանին ու Բուդային» քերթվածքը. դրանով նա անհնարին է դարձրել իր համար ըմբռնելու ոչ միայն վերջինս, այլև «Ընդդէմ ֆալսաքին» քերթվածքը:

Սակայն այս երկի իմաստափորումը թերի է նաև այն պատճառով, որ ժամանակաբանորեն պոկվել է բանաստեղծի մյուս նշանակալից գրվածքից՝ «Գանդատ»-ից. չի գիտված այդ երկուսի իդեական սերտ կապը, անգիտացված են «Վասն Արղուն դանին ու Բուդային» քերթվածքներից հետո կատարված պատմական նոր այն իրադարձությունները, սրանք բեկում առաջացրին բանաստեղծի տրամադրությունների և հայացքների մեջ, ներշնչելով նրան «Վասն թալենի և բրջի», «Ընդդէմ ֆալսաքին» և «Գանդատ» երկերի ստեղծագործության գաղափարը:

Ըստ Արեղյանի, «Գանդատը» գրված պիտի լինի 1295 թվականին, ելնելով այն նկատառումից, որ քրիստոնյաների դեմ հանված հալածանքները և, հատկապես, եկեղեցիների այն ավերումները, որ նշված են այդտեղ՝ տեղի են

ունեցել այդ թվականին¹: Սակայն թեպետև մուսուլմանական մի շարք քաղաքներում եկեղեցիների ավերումները, ինչպես վկայում է Ռաշիդ-ալ-գինը, տեղի էին ունեցել 1295 թվականին², Թավրիզում գրանք կատարվել էին թե այդ և թե 1298 թվականին³: Այս հիման վրա կգժվարանայինք համաձայնել այն պնդումի հետ, թե «Գանդատ»-ը գրվել է հենց 1295 թվականին: Այն կարող է զբոլած լինել նաև այդ թվականից հետո, ըստ, ըստ, համեմատյան ղեպս, 1298 թվականից ոչ շատ ուշ: Հնարավոր չենք համարում փոխադրել «Գանդատ»-ի գրությունը Ղազան խանին հաջորդած Օլջեյթու խանի ժամանակները, երբ քրիստոնյաների դեմ սաստկացած հալածանքը ավելի տարածուն և տևական բնույթ ստացավ: Քանի որ նշեցինք «Գանդատ»-ի և «Ընդդեմ Ֆալաքին»-ի միջև եղած տրամագրությունների, հայացքների և կերպավորման նույնությունը, պետք է, եթե ոչ նույնություն, գեթ մերձավորություն տեսնենք այդ գործերի մեջ նաև գրանց գրության ժամանակի տեսակետից: Արած կլինեինք ճիշտ հակառակը, եթե ենթադրելու լինեինք «Ընդդեմ Ֆալաքին» բանքի գրության ժամանակը Սահիր-Դիվանի

¹ Հմմտ. Մ. Ա. ր. և դ յ ա ն, II, 547:

² Рашид-ад-дин, III, 165. նույնը հավաստում է Օրբելյանը. տես Օրբելեան, ն. տ. 472:

³ Рашид-ад-дин, III, 179:

մահվանից առաջ, այսինքն՝ դնելու լինելինք
դրա գրությունը 1284 կամ նույնիսկ 1286 թվա-
կանին, ինչպես առաջարկում է Արեղյանը:

Նույն այդ հիմունքով, կարծո՞ւմ ենք, որ
«Քրիստոնէից անմխարանութեան» մասին գրված
քերթվածքը ևս, ուր ակնարկված է քրիստոնյա-
ների դեմ թաթարների հանած հալածանքը,
գրված պիտի լինի գարձյալ այդ տարիներին:
Այդ քերթվածքում հանդիպում ենք, ի դեպ,
այսպիսի տողերի.

Ըզմեղ երևտ աստուած ի ձեռս անաւրինաց՝
որ կտորեն:

Զինչ սատանայ մեզք սերմանել, տաճկունք
զամէնքն կու զորձեն՝:

«Տաճկունք» բառն այստեղ գործ է անված
«մահմեդականք» իմաստով: Ասել է՝ բանքը
գրված պիտի լինի 1295 թվականից հետո, մի
ժամանակ, երբ Թավրիզում սկսել էին գահակալել
մահմեդական էլիսաններ:

Մի քանի նշաններից դատելով՝ Ֆրիկը գրել
է նաև խորին ծերության տարիներին, դուրս
գալով, այդպիսով, 1280 – 1304 թվականների սահ-
մաններից: Սակայն, մեր գիտպաթյուններից
պարզ է նաև, որ նրա ստեղծագործության
ամենից բեղուն ժամանակաշրջանը ընկնում է
այն ժամանակամիջոցի վրա, երբ գրվեցին

¹ Դիվան, 2, 63 – 64, Հմմտ. Բանաստ., XXXIV, 79 – 82:

նշանաւոր նրա բանքերը՝ «Ընդդէմ ֆալաքին» ու «Գանգառ»-ը:

Այս կապակցութեամբ հարց է առաջանում նաև Ֆրիկի ծննդյան ու մահվան տարեաւանաների մասին: Բանաստեղծը խոսում է իր «ալեօր» տարիքի մասին: Եւ քաշվելով 1286 թվականից 59 տարի, Արեղյանը 1236 թվականին է ենթադրում Ֆրիկի ծնունդը: Նույն կարակացութեանն է հանգում նա, ինչպես տեանք, նաև Ֆրիկի «Առուրքս անցան հեա մատասիս» տողի հիման վրա, ենթադրելով, որ բանաստեղծն ուղում է ասել, թե աչք է բացել թաթարների հետ, այսինքն՝ ծնվել է թաթարների Հայաստան արշավելու տարում, 1236 թվականին¹:

Որչափ հերքում ենք Արեղյանի բերած հիմքերից թե մեկը, թե մյուսը, չենք կարող ուղիղ համարել նաև զրանից հանած նրա կարակացութեանը: Այնուամենայնիվ, իջեցնելով «Քրիստոսնէից անմիաբանութիւն» և «Ընդդէմ ֆալաքին» բանքի գրութեան ժամանակը 1295—1298 թվականները, և, ելնելով հեղինակի «ալեօր» տարիքից, պիտի ենթադրենք, թե Ֆրիկը ծնվել էր 13-րդ դարի 40-ական թվականների կեսերին: Քերթվածքի գրութեան ժամանակից, ներկա դեպքում, մենք ևս կա ենք հաշվում «ալեօր» տերմինի համար Արեղյանի սահմանած 50 տարին: Կար-

¹ Մ. Արեղյան, II, 513:

ծում ենք, որ ամենի տարիքոտ մի ճակարձ
գծվար կկարողանար ձայնատար հանգիտանալ
տրամադրությունների այն հեղաբեկման, որ
շեշտակի արտահայտություն է գտել հեղինակի
Քհնդգեմ Ֆայաքին՝ և գաղափարամերձ մյուս
քերթվածքներում:

X

Յրիկի ստեղծագործությունները գնահատ-
վում էին տակավին հեղինակի կենդանության
ժամանակ: Նա գիտեր, որ իր գրվածքները
կարգացվում ու քննվում են խնջույքներում ու
հավաքույթներում:

Ով կարգայ գայս բաներս և ինքն զմբաղի,
Թող յիշէ զանարժանս աւրիկ մի բարի:
Դուք աւրհնիք յատուծոյ նորայրք սիրելիք,
Թէ զքնէք գայս բաներս ի միտ և ի հոգի:
Նւ աղէկ իմանայր, թէ ինչ կու խաւսի,
Տուք ըզփառս աստուծոյ նըստողք ի զինի:
Նւ ուսիք, որ կարդայք ի մէջ ժողովի,
Նւ լինիք զովելի զուք փոքր ու մեծի:

Յրիկի գրվածքները բերան էին արվում կամ
ընդօրինակվում հաճախ գրիչների փափախակներ-
րով: Նրանից ազդվում էին և երբեմն հրապա-
րակվում այլ անունների տակ: Ըստ երևույթին
նման գեղքեր ուներ նկատի Յրիկը, երբ
գրում էր՝

¹ Դիվան, ԼԹ, 69—70: Բանաստ., XXI V, 66—73:

Ով զիմ անունըս խափանէ՝
Զիւրըն զըրէ պարծենալոյ,
Յաստէնս շանէ ինք թողութիւն,
Անդէն զըրկի ինքն ի բարոյ՝:

Ֆրիկի «Ընդդէմ ֆալսաքին» և «Գանգատ»
բանքերը ամենից լայն արձագանքը գտան միջ-
նագարյան ընթերցողների շրջաններում: Սրան
ստացույց այդ քերթվածքների առավել բազ-
մազան փոփոխակների առկայությունը:

Նշանակալից են, մանավանդ, «Գանգատ»-ի
փոփոխակները: Գրիչներից մեկը որակում է այդ
գործը որպես գոտեմարտ աստծու հետ՝ «Բարսղի
ումեմն մարդոյ կսիւ եզեալ ընդ աստուծոյ»²:

Մի ուրիշը վերնագրում է այդ բանքը «Սար-
կավագ վարդապետի ասացեալ մարտ ընդ աս-
տուած»³:

Մի երրորդը, ավելի ուշ ժամանակներում, կրք
մոնղոլները չքացել էին ասպարեզից և թուր-
քերը աիբել Կ. Պոլսին, հասցեագրելով «Գան-
գատ»ը Գրիստոսին՝ գրում էր.

զհայս և Ստամբուլ աւեր թրքի
եւ զգժոխքն սատանայի՝:

Որչափ Ֆրիկի նշանավոր մի քանի գործերի
մեջ ընդկալուղված չէր հեղինակի անունը, հետա-

1 Գիվան, Ժ, 100 – 101: Հմմտ. Բանաստ., XVІ, 186 – 189:

2 Գիվան, եր. 529, ծան. և Բանաստ., եր. 240:

3 Գիվան, եր. 511, ծան. և Բանաստ., եր. 247:

4 Գիվան, ն. տ. ծան.: Հմմտ. Բանաստ., ն. տ., ծան.:

դայսում գրանքը նկարվում էին սրպեա ժողովրդ-
 գական սակզագործությաններ և ենթարկվում
 բազմաթիվ վերմշակումների: Այսպես վերամշա-
 կելով «Գանդատ»-ը՝ գրիչներից մի-երկուսը մըտ-
 ցբերել են բնագրի մեջ իրենց անունները՝ Բար-
 սեզ, Թորգոմ և այլն: Ոմն Հովհաննես, վերամշա-
 կելով «Գանդատ»-ի աեքստը, գրել է նրա վերնա-
 գրում իր անունը, առիթ տալով հետագա գրիչնե-
 րից մեկին թյուրիմացաբար վերագրել այդ
 բանքը Ֆրիկից շուրջ երկու դար առաջ ապրած
 Հովհաննես Սաբկավագին¹: «Գանդատ»-ի այս
 կարգի առինչումները հատկապես նշանակալից
 են այն աեսակետից, որ լսելի են դարձնում հըս-
 չակավոր երկի անմիջական արձագանքները
 կամ նրա արած ապավորության սեզոնանս-
 ները: Հատկանշական է, բացի այդ, որ «Գան-
 դատ»-ին արձագանքեց բոլոր այդ Բարսեղները,
 Հովհաննեսներն ու Թորգոմները, հավանորեն,
 աշխարհական մարդիկ էին և քաղքենի վաշի
 խափերից, ինչպես և ինքը Ֆրիկը:

Ֆրիկյան աեքստի նման վերմշակումները
 առիթ են տվել սոցիալական աիրոյ կարգերի
 դեմ բազմաթիվ բանաստեղծի ըմբոստ քննալը
 սովերարկելուն հետամուտ բուրժուա-կղերական
 բանաւերներից սմանց նրան գրկելու իր ամե-
 նից հռչակված սակզագործության՝ «Գանդատ»-ի

¹ Ա. Ա. Բ. Բ. ա հ ա մ յ ա ն, նշված տեղում, էր. 6:

բուն հեղինակը լինելու պատվից: «Գանգատ»-ը Ֆրիկի ստեղծագործությունը լինելու մասին կասկած էր հասցանել տակավին Նահապետ Քուչակի «Դիվան»-ին կցված նախարանի հեղինակը: Բռնելով վերջինիս ծուռ ճանապարհը, բնդարձակ իր ուսումնասիրության մեջ բանասեր Տիրաչըը ջանք է անում վերադրել «Գանգատ»-ը վերը նշված Բարսեղին: Ֆրիկին նվիրած իր ուսումնասիրության մեջ նա վստահում է տատնյակ անհամոզիչ էջեր, ուր ճիգ է անում ցույց տալ, թե «Գանգատ»-ը գրված է միջնագարյան Արևմուտքի հակապապական գրականության՝ մասնավորապես Պրովանսի տրուրագուրների և իտալական գրականության նոր հասանքի ազդեցության տակ: Ըստ այդմ, որպես թե վերստիշյալ Բարսեղը կամ նրա գրածը օգտագործող հեղինակները, որոնց թվում նաև Ֆրիկը, մշակում էին այդ նյութը, ինչպես և տեղական Շառակ ու մաստալաձ-ները տարված Պրովանսի տրուրագուրների կամ իտալական և բրազիլացիների և ինքնուրույն գրավիչությունը»¹ Վերադրելով «Գանգատ»-ի բուն տեքստը Բարսեղի գրչին, բանասեր Տիրաչըը այդ գործը համարում է արդյունք՝ «զիտողի հոսեակն փիլիսոփայության աշխարհահայացքի, սրի հիմքն է կազմում կյանքի կա-

¹ Ֆրիկի «Դիվան»-ի Քննական ուսումնասիրությունը, Եր. 225:

սուցվածքի հոսի և անարդար բմբունումն ու կազմը (Գ Ա. Հ.)¹»:

Ահներև է բանասեր Տիրայրի «հոսի ու անարդար» գիտավորությունը: Համարելով «Գանգատ»-ը արևմտակա լրագրական բարձրի ու մտածողության անդրադարձում, նա կամենում է տեսլ, թե նշանավոր այդ գործի մեջ պատկերված այլանպակությունները որևէ կապ չունեն հայ իրականության մեջ իշխած կացության հետ: Նա հետ է վանում նույնիսկ այն միտքը, թե օտար հուշարկումների ազդեցությամբ, «Գանգատ»-ի հեղինակը կարող էր նման հակասություններ նշմարած լինել հայ իրականության մեջ կամ մերկացրած հայ կյանքի հոսի բարձրն ու անարդարությունները: «Բարսեղ իմաստունի «Գանգատ»-ը, — գրում է Տիրայրը, — նույն օրերի բարձրի այն տեսակ հայելիներից է, որի մեջ նայողը յուր սեփական դեմքն է տեսնում, և՛ խեղված և՛ այլանպակված, ուր սակայն հայելին և ոչ մի մեղք ուներ»²:

Կարծում ենք, ֆեոդալական Հայաստանում իշխած սոցիալական հակասությունները վարագուրելու տենդենցը չէր կարող զրակերված լինել ավելի ցցուն կերպով, քան այն, ինչ գտնում ենք Ֆրիկյան «Դիվան»-ին կցված նացիոնալ-

¹ Ֆրիկի «Դիվան»-ի Քննական ուսումնասիրությունը, Եր. 110:

² Նույն տեղում:

կղերական սեակցիոն այս ու նման դատումների մեջ: Բարսեղներից առաջ ժողովրդական քառակ ու մասարած-ներ գրում կամ մշակում էին մեղանում բաղմաթիվ անվանի հայ հեղինակներ, որոնց կրկերում գովար է նշմարել պրովանսալ կամ խապահան կրգիչների աղղեցությունը: Հիշատակենք Շնորհալուսն, Գոշին և Այդեկցուն: Այն հանգամանքը, որ ձեռագրերից մեկում կամ մյուսում Ֆրիկի «Գանգատ»-ը վերագրվում էր ուրիշ անձերի, դեռ հիմք չէ կասկածելու Ֆրիկի հեղինակությունը: Ֆրիկի «Դիվան»-ին կցած իր «Քննական ուսումնասիրության» մեջ բանասեր Տիրայրը բերելով

«Դարեր եկան, դարեր անցան էջմիածին»

հանրածանոթ ստանալորի առաջին չորս տողերը, գրանց հեղինակն է համարել Հովհ. Թումանյանին¹: Եթե քսաներորդ դարի կեսին հայ մի բանասեր կարող էր բնկնել նման մի թյուրիմացության մեջ, ինչ կարելի է պահանջել միջին դարերի հաճախ կիսագրագետ գրիչներից...

Դժբախտաբար, «Դիվան»-ը գրախոսող Ա. Արբասամյանը Տիրայրի պնդումը հերքելու փոխարեն, համաձայնության սրտ լեզրեր է շոշափում նրա սխալ ու վնասակար տեսության հետ: Կանգ առնելով Բարսեղի անձնավորության վրա, պրոֆ. Ա. Արբասամյանը հարկ է համա-

¹ Ֆրիկի «Դիվան»-ի Քննական ուսումնասիրությունը, կր. 230:

բում քնդարձակ մեջբերում տնկել Պրիկին ժամանակակից սին Բարսեղ քահանայի չափածո հիշատակարանից, սր ծաղրված են Կիլիկիայի Հեթում Ա թագավորը և Սսի Գրիգոր Անավարդեցի կաթողիկոսը: Հնարավոր համարելով, որ «Պանդատ»-ը մշակողներից մեկը կարող էր կզամ լինել հենց կիլիկեցի այդ քահանան, պրոֆ. Արքանամյանը չի վարանում ասելու, թե «Պանդատ»-ը «ժողովրդի մեջ, ժամանակի մտավորական ասաջագեմ շրջաններում տարածված և գնահատված մի երկ է կելել և այն խմբագրվել և մշակվել է մի քանի անգամ»¹: Բարսեղից զատ պրոֆ. Արքանամյանը «ժողովրդական» այդ երկի մշակողներից մեկին է համարում նաև Պրիկին, որին նա արամագիր է գրակել որպես Կիլիկիայի «մտավորական ասաջագեմ շրջաններին» պատկանած անձնավորություն:

Այսպիսով, ըստ Արքանամյանի ևս, Պրիկը «Պանդատ»-ի բուն հեղինակը չէ, այլ ժողովրդական նյութի բազմաթիվ վերամշակողներից մեկը, ճիշտ այնպես, ինչպես անհայտ Բարսեղը կամ Հովհաննեսը:

Հարկավ Պրիկի մաս ևս կան ժողովրդական նյութի մշակումով գրված երկեր: Հայտնի է, որ նրա «Ը վերա կըրայրատպանին» տալը հանգիտանում է ժողովրդական սյուժեի մշակում:

¹ Ա. Արքանամյան, նույն տեղում, էր. 5 և հու.:

Նույն այդ տարը մեզ է հասել նաև Քուչակի և Սուպագա Պոռեցու վարխանաներով: Բայց ակներև է, որ «Գանդատա»-ը չի պատկանում ժողովրդական սյուժեի կամ բացասուպես ժողովրդական բանահյուսության մտատկարարած առաջի մշակումով կերտված գործերի շարքին: Որքան էլ գորեզ լինի այդ երկի հիմքում գրված իմաստասիրության կամ նրա մեջ տեղ գտած բառ ու բանքի ժողովրդայնությունը, «Գանդատա»-ի մեջ նշմարելի է կերտող հեղինակի անհատականությունը. ինչ վերաբերում է Բարսեղի կամ Հովհաննեսի անունով մեզ հասած «Գանդատա»-ի վարխանաներին, գրանք ևս սոսկ ժողովրդական նյութի մշակումներ չեն, այլ գրական գործեր, որոնց անմիջական ազդեցությունը հանդիսանում էր Ֆրիկի «Գանդատա»-ը:

«Գանդատա»-ի լեզուն, առգաչափությունը, պատկերելու եղանակը սննդով չի տարբերվում Ֆրիկի մյուս սակեծագործություններից: Եվ որ կարևորն է՝ «Գանդատա»-ի հեղինակը արժարժում է նույն մտքերն ու տրամադրությունները, որ հանդիսում են նաև «Ընդդեմ ֆալսեթին» բանասակեծության մեջ:

Պատահական չէ, դուցե, որ Ֆրիկի «Ընդդեմ ֆալսեթին» երկն արժանացավ նույն լախաին, որին ենթարկվել էր նրա «Գանդատա»-ը:

«Ընդդեմ ֆալսեթին» բանասակեծության մի շարք բեյթերը մուտք գործեցին միջնադարյան

հայ կլլասիկ թարգմանություններից մեկի՝
Աղեքսանդր Մակեդոնացու պատմության կաֆա-
ների մեջ, Այսպես՝ անդրապառնալով Գարեհ
արքայի չարակրություններին՝ այդ կաֆաների
շարքում հանդիպում ենք այսպիսի տողեր.

Յորժամ չարին ի յետ քակի
Ու ձրդէ ի յաչքն խոյոր
Ոչ գաւրք և ոչ հեծել աւզնէ,
Ոչ հարիւր հազար ձիավոր:

կամ թե՛

«է՛ չարիս, ևս քեզ անց աւտամ
Երբ չունես զոչ որ մաւտաւոր,
Ոչ դաւ, ոչ երզում ունիս
Ձի թո սիրան է խիտ նենգաւոր»¹:

Այս կաֆաները ընթերցողին հիշեցնում են
անշուշտ Փրիկի & Լնդդէմ ֆալսաքին»-ի ծանոթ
տողերը:

Կամ մի՞թե նույն քերթվածքի

«Հիմի զքժարեց բաներս
Որ թաթարն եղաւ թագաւոր»

տողերով սկսվող քասյակները չեն ազդրուր ծա-
ուայել Աղեքսանդրի այս կաֆաներին.

«Ահա՛ զքժվարեց իմ բանս
Աղեքսանդր եղաւ թագաւոր,
Ձրբկեց զԳարեհ արքայս,
Որ էի անեղ զաւրաւոր.

¹ Հմմտ. Մատ. ձեռ. № 1449. Թ. 295ա և 300ա:

Ոչ այս չըմնայ նըմայ
Ոչ ֆալաքն իւրում կարեոր
Ռուսկար դնա կարմիր ներկէ
Ու ձրդէ յանդունդս ի մուրքս:

Վերջին չորս տողերն համապատասխանում
են Ֆրիկի

Այս չի մընայ հանցեղ ու ֆալաքն ոչում կարեոր
Զարնու ու ձրդէ ի վայր չհամարէ ոչում թագաւոր

տողերին, որոնք միջնադարյան «գրաքննիչները»
կազմից գուրս են ձգվել Ֆրիկի տաղարաններից և
գլխավածարար պահպանվել միայն Օքսֆորդի
Բոդլեյան մատենադարանի հայերեն ձեռագրերից
մեկում: Բայց այն, ինչ գուրս են նետել քաղա-
քականապես լոյսը «գրաքննիչները», սիրով
հյուրընկալվել են ժողովրդի ընթերցանության
համար գրի առնվող կաֆաներում՝ ցայտուն
կերպով ցույց տալով, թե որքան մաս էին
Ֆրիկի մի շարք երկերը ժողովրդական մաս-
սաների հայացքներին ու արամագրություննե-
րին:

Ակնբախ է Ֆրիկի ազդեցությունը նաև Մա-
կեդոնացուց պարաված Հնդկաստանի թագավորի
չար վախճանին վերաբերող կաֆայում:

Վմյ այս Պովրոսիս տակմ
Որ ունէր զհընդիկս բոլոր
Հանց ոսկի աթու ունէր,
Որ չունէր ոչ ոք թագաւոր,
Շատ մի պարոնայք 'ւ իշխանք

Յափն ունէր, զինչ հաս մի խընձոր,
Ֆալաքրն իւր սիրան հլաւ,
Լուք արաւ զինքն երկու կտոր:

Ի՞նչ կասկած, որ Պովրոսի վերջը նկարագրու-
ված է նույն բաներով, որ հանդիպում ենք
«Ընդդէմ ֆալաքին» բանքում, այնուհետ, ուր նըշ-
վում է Սահիր-Գիվանի կործանումը:

Հարցը չի սպառվում Ֆրիկի առանձին տո-
ղերի կամ նրա ազգեցությամբ գրված առանձին
կաֆաների մտանանշումով: Աղեքսանդրի կա-
ֆաների իմաստը — մարդու և նրա բախտի կապը,
բախտի և առածու կապը — նույնն է «Ընդդէմ
ֆալաքին» քերթվածքի հետ: Բոլոր կաֆաների
մեջ իշխում է զլխավոր այն միտքը թե ամենքը
ենթակա են անողոք ֆալաքին, անգամ
աշխարհի հզորները և սրանց մեջ նույնիսկ Մա-
կեդոնացի «ամենահազիթ» համարված աշխար-
հակալը:

Ե՞րբ կամ ո՞ւմ ձևաքով են մտել Ֆրիկյան
կաֆաները Աղեքսանդրի պատմության մեջ:
Կաֆաներ պարունակող Կեղծ-Կալիսթենեսի հայե-
րեն բնագիրները մինչև հիմա հայտնաբերված են
միայն 16—18-րդ դարերի ընդօրինակումներով,
հանդամանք, որ գովարացում է այդ հարցերի
պատասխանը: Հայանի է, որ ընդօրինակելով
Աղեքսանդրի պատմությունը, Սաչատուր Կեչա-
ռեցին մտցրեց նրա մեջ չափածո իր «բարառ-
նությունները»: Այստեղ Մակեդոնացի հերոսը

մեծարվում էր որպէս առաքինի մի հերոս, որը ըստ քրիստոնեական առասպելի՝ նախակարապետակ էր նրանից երեք ու կես դար հետո հայտնու- ված Վերկինալսր թագաւորին: Բարաոնություն- ներից զատ Աղեքսանդրի պատմութեան մեջ հանդիպում են նաև Կեչառեցուն վերագրվող կափաներ, «հայրեններին» չափերով գրված թեյ- թեր, որոնք կրկնում են արձակ հատվածների բո- վանդակութունը կամ ամփոփում դրանց իմաս- տարանությունը: Չափածո այդ տողերը, ինչպէս դիտում էր Մ. Արեղյանը, «չեն կազմում մի կապակցված պատմվածք»: Կցկտուր հատվածներ են դրանք, որոնցով Կեչառեցին կամեցել է միայն «թարմացնել» կամ «հետաքրքիր ու գրավիչ» դարձնել Կեղծ-Կալիսթենեսի պատմու- թյան սյուժետը:՝ Մ. Արեղյանից առաջ այդ կարծիքը հայտնել են նաև ուրիշները՝ Տաշյանը, Կոստանյանը, Ակինյանը, Գ. Հովսեփյանը և ուրիշ- ներ, մատնանշելով, որ Կեչառեցուց զատ Աղեք- սանդրի պատմութեան կափաներ գրել են նաև Գր. Աղթամարցին, Չաքարիա Գնունցի եպիս- կոպոսը և Հովասափ Սերաստացին:

Նոր լույս սփռվեց այս հարցի վրա միայն վերջերս, Խաչատուր Կեչառեցուն նվիրված թեկ- նածուական մի դիտերտացիայի մեջ: Քննելով Մատենադարանի ֆոնդերը, դիտերտացիայի հե-

1 Տե՛ս Մ. Արեղյան, ն. տ., 11, 231:

դինակ Մ. Ալգալբեկյանը հատուկ ուշադրու-
թյուն է դարձրել № 7709 ձեռագրի վրա, ուր
Կեչառեցու անունով սրահված է Աղեքսանդրի
սրատմությունն ամփոփող մի պոեմ, որին դի-
սերտանալը «Աղեքսանդրի տաղ» անունն է տա-
լիս: Հայրենների չափով գրված այդ տաղն է,
ասում է Մ. Ալգալբեկյանը, որ, հատվածների
բաժանվելով, մտցվել է Աղեքսանդրի արձակ
սրատմության մեջ, իսկ ավելի ուշ, այդ սրատ-
մության մեջ տարբեր խմբավորումներով ու
խմբագրություններով մուտք են գործել նաև
այլ հայրեններ, ստնված Կեչառեցուց, Ֆրիկից,
Երզնկացուց, Բուչակից և այլն:

Այս գիտողությունը ճիշտ է թվում մեզ և
կարծում ենք նպաստում է ոչ միայն Աղեք-
սանդրի սրատմության «կաֆաների» խճողված
հարցի, այլև, մասնավորապես, Ֆրիկի և Կեչա-
ռեցու գրական առնչությունների սարգարան-
մանը: Որչափ Կեչառեցին գրել է Աղեքսանդրի
չափածո սրատմությունը միայն սյուժեառային
պլանով, գժվար է նրան վերագրել Ֆրիկից առ-
նրված կամ Ֆրիկի հեռուությամբ գրված խմաս-
տարանահան կաֆաների ներառումը Աղեքսանդ-
րի արձակ սրատմության մեջ: Ֆրիկյան տո-
ղերը բացակայում են նաև Աղեքսանդրի սրատ-
մության կաֆաներ գրող մյուս հեղինակների
մոտ: Սրանց մեջ միայն Հովասափ Սերաստա-
յին է, որ 16-րդ դարում գրել է Աղեքսանդրի

պատմութեան կաճաներ, որոնց վրա նկատելի են Ֆրիկի ազգեցութեան հետքերը¹ :

Հետազոտելով Մատենադարանի ձեռագրահան նյութերը, մենք ուշագրութեան դարձրինք մի ձեռագրի վրա, որը ինչպես երևում է, վրիպել է Մ. Ավգալրեկյանի ուշագրութեանից: Ձեռագիրը գրված է 1723 թվականին: Այդ ձեռագրում հանդիպում ենք «հայրեններով» գրված ընդարձակ մի պոեմի, որի հեղինակի անունը նշված չէ դժբախտաբար: Պոեմը վերնագրված է «Պատմութիւն մեծի և յաշխարհակալի Աղեքսանդրու Մակեդոնացոյ. կեանք վարուց քաջութեան և գործք արխականք, նաև վախճան նշաննօք»², եման վերնագրով մի գործ հանդիպում է նաև Բրիտանական թանգարանի հայերեն ձեռագրերի մեջ³: Բովանդակութեանից դատելով՝ ձեռագիրը 17-րդ դարից առաջ չէ գրված:

Մատենադարանի մի այլ ձեռագրում գտնում ենք նույն պոեմի վարիանտը, որը վերջանում է այս հիշատակարանով. «Պատմութիւն Աղէկսանդր թագաւորին շինեալ սմեմն ի միտս իւր

¹ Գ. Հոփսեփյան, «Հովասափ Սերաստացի», տե՛ս «Արարատ», 1918, եր. 271 և 273:

² Տես Հայկական ՍՍԹ Մատենադարան, ձեռ. № 723, Թ. 5բ—56ա:

³ A Catalogue of the Armenian manuscripts in the British museum, London, 1913, եր. 227.

գեղեցիկ բանիւք... Ով որ պատահի սակաւ գրոյս սասցէ աւտուած սղորմի Տիգրանեցի Մարտիրոսին և անարժան վարդապետին Ճ Ռ-ական երկ ընդ նմին (որ պիտի կարգալ 1102 = մ. թ. 1653 թ.—Ա. Հ.) եկու ուխտել յանապատին, մնացի յաւուր յսլով առարին...»¹

Պոեմի սյուժեն Կեղծ-Կալիսթենեսի Աղերսանգրի պատմությանն է դարձյալ: Սակայն Կեչառեցու չափածո գրվածքից պսեմը տարրերվում է իր ընդարձակ ծովալով ու բովանդակությամբ: Պոեմը հագեցված է իմաստարանական կաֆաներով, առանցք ունենալով «Ընդդէմ Փալարին» բանքը: Ֆրիկիյ զատ հեղինակն օգտագործել է նաև Կեչառեցու անունով հայանի կաֆաներից մի քանիսը, սակայն, անանուն հեղինակի այս պսեմը հիմնականում ուրույն գործ է²:

¹ Հայկական ՍՍՌ Մատենադարան, ձեռ. № 8482, եր. 225ա—275ա:

² Թվում է մեզ, որ հենց սրա հին օրինակներից են ասնվել Աղերսանգրի պատմության ձեռագրերում հանդիպող կաֆաները, որոնք հետադարձում վերադրվում էին Կեչառեցուն, ըստ երևույթին, միայն այն հիմունքով, որ այդ հեղինակի անունն է հանդիպում Կեղծ-Կալիսթենեսի պատմության գրքի վերջում զհանդիված բարանու-թյուններին մեջ:

Ըստ երևույթին, 16-րդ դարում ապրած հեղինակների՝ Գրիգոր Աղթամարցու, Զաքարիա Գնունցու և Հովասափ Սերաստացու կաֆաները գրվել են անանուն հեղինակի

Աղեքսանդրի անվան հետ կապված կաֆա-
 ները բացառիկ արժեք ունեն ոչ միայն միջնա-
 դարյան հայ պոեզիայի, այլև հայ քաղաքական
 մտքի պատմութեան համար: Պոռշյան տոհմի
 ասպետական տրագիգիաներով սնված Կեչառե-
 ցին համարում էր Աղեքսանդրին առաքինու-
 թյան և արդար գառաստանի, գիտութեան և
 արիութեան կերպար: Մակեդոնացի թագավորին
 կործանում է «խուժագուժ աղգաց» բռնատիրու-
 թյունը և, ինչպես Քրիստոսը խաչի վրա՝ հաղ-
 թահարում «խափարասեր» սատանայի իշխանու-
 թյունը: Նրա կերպարի մեջ մարմին էր առ-
 նում «պսակաւոր արքայի» քաղաքական պատ-
 կերը, մեծ և առաքինի համարված թագավորի
 իդեալը: Ըստ այդմ բոլոր թագավորների և զօ-
 րապետների, բոլոր գիտունների և գաղափար-
 ների համար՝ Աղեքսանդրն է, որ պիտի հանդի-
 տանա կատաբեւութեան տիպար ու օրինակ:
 Բանատերերի իշխանութեան վերջ է գնում և թե
 ոչ ժողովրդի ցասկոտ կամքը, գեթ առաքինի
 րնդարձակ այս պոեմից ավելի ուշ: Դրանով պիտի բա-
 ցատրել, որ այնքան հազվագեղ են Աղեքսանդրի պատ-
 մութեան այն օրինակները, ուր րնդելուզված են այդ
 տաղերգուների կաֆաները: Այդ կաֆաները կամ սրանց
 թողած աղգեցութեան հեռքեր չենք զանում նաև անանուն
 հեղինակի գործում: Եվ սա հասկանալի է: Անանունի
 պոեմը գրվել է 14—15-րդ դարերում՝ Փրիկից և Կեչառե-
 ցուց հետո և Աղթամարցուց, Ջաքարիայից ու Հովհան-
 փից առաջ:

Թագավորի սուրը, որ անողոք բախտի պես
կտրելու է իշխող բռնակալի կյանքի թելը:

Բախտի մասին պոեմում հանդիպող քառ-
յակները պոեմի հեղինակը առնում է Ֆրիկից:
Սակայն, որպես ամբողջութուն, պոեմի մեզ
հասած վերսիան չի կարողացել հարադատ մնալ
Ֆրիկի ժողովրդական ոգուն: Չորեք ու արդա-
բամիտ Թագավորի իդեալին ժամանակին տուրք
է տվել նաև Ֆրիկը: Սակայն, ինչպես տեսանք,
հետագայում նա սթափվեց այդ պատրանքից,
մինչդեռ Աղեքսանդրի պոեմում հանդիպում ենք
քառյակների, որոնք, ըստ ամենայնի, հանդավոր-
ված են մոնղոլների ժամանակ իշխանություն
ձեռք բերած մորալի հետ.

Ճորտն որ սլարոնին նենդէ...

Սոտէն մեծ ամաւթ կրէ՝

Աներես ի հրսպարակի,

Անտեն ի դատման աւուրն՝

Տանջի ընդ սատանայի:

ասված է Աղեքսանդրի պոեմում¹:

Պոեմում, ինչպես և Աղեքսանդրի կաֆանե-
րում հանդիպող այս տողերը, ընդառաջելով
իշխող հասարակաշերտերի հայացքներին, ակըն-
բախտորեն հակասում են Ֆրիկի հակաֆեոդալա-
կան հայացքներին:

¹ Տես Մատենագ. ձեռ. № 723, թ. 35: Հմմտ. նաև
ձեռ. № 1449, թ. 302ա:

Մի քանի նկատողություններ Պրիկի կենսագրութեան հետ առնչված մանրամասների շուրջը՝

Պրիկի անունը որպես հատուկ անուն հանդիպում է Թավրիզի 1391 թվականի մի ձեռագրում¹, ինչպես նաև 1517 թ. մի այլ ձեռագրում²: Թվում է մեզ, որ այդ անձնանունը ժողովրդական կամ փաղաքշական ձևն է այն անվան, որ հանդիպում ենք Աֆրիկյան կամ էֆրիկյան ծանոթ ազգանունների հիմքում, ասել է՝ սղված է Աֆրիկ կամ էֆրիկ անձնանուններից: Բանասեր Տիրայրի այն կարծիքը, թե «Պրիկը» հեղինակի անձնանունը չէ, այլ նրա գրական անունը առաջացած «Պըրֆոիկ» կամ «Ֆըռիկ» բառից, որ նշանակում է պտտող, թափառող, անտեղի է թվում մեզ, որչափ բանաստեղծը ոչ մի տեղ չէր կոչում իրեն «Պրիկ», այլ միշտ՝ Պրիկ: Բացի այդ, նկատի պիտի ունենալ նաև այն, որ բանասեր Տիրայրը առաջարկում է Պրիկ անվան անհավանական այդ ստուգաբանությունը, ելնելով իր սխալ այն վարկածից, թե Պրիկին է պատկանում Հովասափ

¹ Հ Ա ճ ա ո յ ա ն, Ճուլցակ հայերէն ձեռագրաց Թավրիզի, 1910, Վիեննա, եր. 46:

² Տես Ա. Արբա համյան, ն. տ., հր. 2:

Սեբաստացու «Յիշէ դրանն Աւետարանին» բա-
նաստեղծությունը, որի տիրոտաւրքի մեջ նա
կամենում է կարգաւ Ֆրիկի «Հովասափ» անունն
ու. «Մազազ» կցանունը: Սակայն Տիրաշրի այդ
հայտնագործության անտեղությունը արդեն
մատնանշվել է Հովասափ Սեբաստացու մասին
Գ. Հովսեփյանի գրած հետազոտության մեջ:
Նշված բանաստեղծությունը Հովասափ Սեբաս-
տացու գործն է անշուշտ:

Ուղղակի ցուցումներ բանաստեղծի ծննդա-
վայրի կամ կենսավայրի մասին բացակայում
են: Ինչպես տեսանք, մի տեղ միայն նա
ասում է.

Շատ մի դատեցա, եղբայրք,
Ի Հարգայ ես շատ մի տարի:

Սա առիթ է տվել Ֆրիկի «Դիվան»-ը կազ-
մողին «Հարգայ»-ն նույնացնել Կիլիկիայի «Հար-
գան» (= Հաջին) քաղաքի հետ: Իսկ Մ. Արեղ-
յանը այդ անունը ազճատված համարելով «Հար-
գայ» կամ «Հազրայ»-ից, առաջարկում էր տեղա-
դրել բանաստեղծի տեախան գործունեության
այդ վայրը Աղձնիքում, այսինքն Միջագետ-
քում¹:

Իր գրախոսականում պրոֆ. Ա. Արրահամ-

¹ Տես Դիվան, եր. 39 և Մ. Աբեղյան, ն. տ. 11, 251:

յանը կարծում է, թե Ֆրիկի բնագրում հանդիպող «ի Հարգած»-ն չպիտի հատուկ անուն համարել, այլ կարգալ՝ «հարգած կամ «ի հարգած», որ պարսկերենից փոխ առված բառ է և նշանակում է «գուր» կամ «ի գուր»: Ըստ այդմ Ֆրիկի համապատասխան սողը այլ իմաստ չունի, քան «Ես շատ սարիներ, եզրայր, իզուր (= սուլարգյուն) աշխատեցի»¹:

Թվում է, թե լեզվաբանական կամ հնագրական տեսակետից հիմք չկա մերժելու Ա. Արբահամյանի վարկածը, — որով, ի վեպ, ինքյան կվերանային նաև Ֆրիկին կիլիկիայի կամ Միջագետքի հետ կապելու մասին եղած ենթադրությունները: Այնուամենայնիվ՝ ոչ միայն հնարավոր, այլև հավանական ենք համարում պահել Հարգան, որպես Ֆրիկի կենսագրության այլ փաստերին համապատասխանող տեղանուն:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում նախ հիշեցնել Ֆրիկի տրտունջն այն մասին, որ քսան տարի շարունակ կյանք է մաշել թաթարական ամառանոց-ձմեռանոցների ուղիններում: Այդ հանդամանքը փոխադրում է մեզ ուղղակի Անգրկիովկաս՝ մասնանշելով մանդոլ բանակի կամ արքունիքի պարբերական քոչերը Մուղանի սափարակներից զեպի Ալապազի, Գեղարքունյաց կամ Ղարապաղի լեռնալանջերը

¹ Ա. Արբահամյան, ն. տ., եր. 4 և հ. տ.

և, ընդհակառակը, այս լեռնալանջերից դեպի Մուղան կամ Միջագետք, նայած տարվա եղանակին: Շատ ճիշտ գրում էր Ֆրիկին ժամանակակից Միսիթար Այրիվանեցին թաթարների մասին. «Թեև տեսանել նոցա դաշխարհս Հայոց և Աղուանից՝ հաճեցան ինքեանց տեղի հանգըստեան, զամառային եղանակն տարածելով ի վերա լեռանցն Հայոց և զձմեռն տարածելով յամէնունակ և յինքնարաւ դաշան Բոսնայ, որ ասի Մուղան»¹:

Կարծում ենք, որ կարևոր այս իրողություններն իրողությամբ վերջնական լուծում է ստանում նաև Հարգա տեղանվան հարցը: Վրաց թանգարանում պահվող մի ավետարանի հիշատակարանում, որ գրվել է Ֆրիկից ընդամենը միայն մի դար հետո, 1417 թ. Բարսեղ գրիչը ձեռագիրը ստացող Առաքեալ քահանայի մասին հաղորդում է՝ «Սայ էր բնական ի Հերգա գավառէ, ի նահանգէ Առանա, ի քաղաքէ Բարտաու, ի գեաւղջէ, որ կոչի Պարիս»:

Այս վկայությունից, որ մեզ բարեկամարար հաղորդեց բանասեր Լ. Խաչիկյանը, պիտի հետևեցընել, որ Հարգա կամ Հերգա անունով կոչվում էր Առանի այն գավառը, որի կենտրոնը հանգրվանում էր Աղվանից հին մայրաքաղաք Պար-

¹ Միսիթար Այրիվանեցի, Պատմ. Հայոց, Մոսկվա, 1860, հր. 60:

տավը կամ Բարդավը¹։ Կարծում ենք, որ սրահնով լիովին հիմնադրելիում է Ֆրիկի գործունեությունը և, մասնավորապես, նրա սակզմագործությունը Կիլիկիայի հետ կապելու ենթադրությունը, որ ազդյուր է ծառայել Տիրայրի՝ Ֆրիկին նվիրված ուսումնասիրություն լազմաթիվ սխալ հետևությունների համար։

Շատ մի գատեցա, կզբարք, ի Հարգած տուրը սլարզապես վկայում է այն մասին, որ մասասի հետ առնչված տագնապից առաջ Ֆրիկը մի շարք տարիներ զբաղված է եղել առևտրով հին Ղարաբաղի Պարտավ կամ ներկայիս Ազրբեջանի Բարդա քաղաքի շրջանում։ Որչափ մասասի գործարքները, ինչպես Խաչիգ-ապ-գինի նկարագրություններից տեսանք, մեծ չափով կապված էր ձիու առևտրի հետ, կարելի է ենթադրել նույնիսկ, որ Պարտավի շրջանում Ֆրիկը զբաղված էր հենց ձիերի մեծաքանակ գնման ու վաճառման գործով։ Ղարաբաղը Անգրիկովկասի այն վայրն էր հենց, որ հռչակավոր էր ձիերի առանձին տեսակով ու գնահատված հատկություններով։

Ֆրիկի գործունեությունը Անգրիկովկասի հետ կապելու համար կան նաև ուրիշ հիմքեր։ Տե-

¹ Ներկայիս ընդ. Լ. Խաչիկյանի մատնանշած ազբյուրը հրատարակված է. «Ան նրա Վժժ գարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ», մասն Ա., Երևան, 1955, էր. 205։

սանք, որ հենց Մուզանի գաշտում էլ ակզի էր ունեցել Բուզայի և մյուս գավաղիւրների գըլխատման այն եղևոնը, որ այնքան անմիջորեն ու այնքան հանգամանորեն նկարագրել է Ֆրիկը: Անդրկովկաս է փոխադրում մեզ՝ նաև «Բնոցէմ ֆալաքին» և «Կանգատ» սակզմագործությանների մեջ անդրադարձած քաղաքական նրա ըմբոստությունը: Շատ լավ ծանոթ էր անդրկովկասցիներին նաև նրա ընտրած Սահիր-Գիվանը: Եվ դեռ ավելին. կարելի է ուղղակի կարծել, թե Ֆրիկը ճանաչում էր նրան դեռ Անիից, ուր 1263 թվականին այդ անձնավորությունը հիշվում էր քաղաքի պարտններ թվում: Մոնղոլական ինվազիայից առաջ, որտեղ օգնությամբ, նենգության, սճիրի և վերջապես մատրիմոնյալ կապերի գործությամբ էլ խառններ: Երազմահնար» ու ճարպիկ այդ պաշտոնատերը իր ձեռքն էր հավաքել Հայաստանի անդրկովկասյան գավառները: Հավանորեն նա էր հենց այն անձնավորությունը, որին Շահնշահ Զաքարյանի ժառանգները 1268 թվականին վաճառել էին Անի քաղաքը¹:

Սահիր-Գիվանի մասին գրած տուրքի մեջ Ֆրիկը գրեցորում է ոչ միայն անձնական, այլև անդրկովկասյան ժողովուրդների և դուրս հատկապես նաև քանիցս վաճառքի հանված Անիի

¹ Սամոս էլ Անեցի, կր. 161:

քաղաքացու խոր տակում թյուռնը դեպի էլխան-
ների տխրահաշակ այգ ժամիշխանը: Ի դեպ, այգ
ենթադրությանը համերաշխում է այն վաստը,
որ հակառակ բանասեր Տիրայրի ջանքերին՝ Ղա-
րարազի բարբառի հետ կապելու բանաստեղծի
լեզուն, Ֆրիկի գրական լեզուն ավելի մոտ է
արևմտահայ բարբառների ճյուղին, հանգա-
մանք, որ, ինչպես գիտեց են, հատկանշական է
նաև նրան ժամանակակից անեցիկների գրական
լեզվի համար¹: Այնուամենայնիվ Ֆրիկի անե-
ցիությունը ավելին չէ, քան ենթադրություն, որ
կարտ է հավաստման:

Այն հանգամանքը, որ Ֆրիկի մոտ հանդի-
պում են Ղարարազի բարբառին պատկանող
բառեր՝ բացառվում է նրանով, որ Ֆրիկը եր-
կար տարիներ ապրել էր Ղարարազում. Բարդան
հին Ղարարազի քաղաքական կենտրոնն էր
հենց: Սակայն որևէ բարբառի կամ գրական
որևէ լեզվի բնույթը որոշվում է ոչ թե նրա
բառամթերքով, այլ նրա քերականության սիս-
տեմով, իսկ այգ ակտակետից, ինչպես ասացինք,
Ֆրիկի լեզուն սերտ մերձավորություն չի մոտ-
նում սահասարակ հայերենի արևելյան բարբառ-
ներից որևէ մեկի հետ:

Մի տեղ բանաստեղծը գանգատվում է իր
ուժտապառ ծերության մասին.

¹ Գ. Հ ո վ ս ե տ յ ա ն, Խաղբակյանք և Պոռչյանք, II, 199:

Ձիւնըն ալիքդ է ըսալիտակել՝
Ձըմեան է այն, որ ուժ չունիս¹:

Մի այլ տեղ գրում է.

Ալիքս ի դեղին դարձեր².

Այս ամյալները ցույց են տալիս, որ բանաստեղծը հասել էր խորին ձերության, ասել է՝ ապրել էր շուրջ 75—80 տարի՝ նա ծնվել էր 13-րդ դարի 40-ական թվականներին և վախճանվել հաջորդ դարի առաջին քառորդում:

XII

Ինչպես Ֆրիկից առաջ, այնպես և Ֆրիկի ժամանակ, վերջին դատաստանի ու դժոխքի պատկերացումներով էին ստատում մարդկանց միջնագարյան մեկնություններին ու քարոզագրքերի, ազոթագրքերի և շարականներին, անալագրքերի ու առակագրքերի, տաղերգերի ու վիպերգերի հեղինակները: Ֆրիկը չի պատուում իշխող այդ պատկերացումների բարակ քողը: Սակայն գիտելով իր շրջապատը մարդկային կամքի ու բանականության հետ հաշիվ չհասող «բախտի» ու «դո՛ւլլաթի» լույսի տակ՝ նա մերկացնում էր հաստըսկական կյանքում եղած հակասությունները, դատասպարտում տիրող անիրավությունները:

¹ Գիվան, Ե, 70: Հմմտ. Բանաստ., 11, 130—131:

² Գիվան, ԺԶ, 8: Հմմտ. Բանաստ., X11, 7:

Նրա երկերի մեջ անդրադառնում են հույզեր
ու խոհեր, որոնք հայանագործում են իշխող
մտապատկերներին՝ գեմընթաց ժողովրդական
լայն շերտերի ներքնաշխարհը: Նրա սակզմա-
գործությունը լիովին բարոնելի է միայն նրա
կյանքի ու ժամանակաշրջանի միասնության
մեջ: Հանցանքի ու հատուցման, մեղքի ու զըզջ-
ման, տանջանքի ու փրկագործման արամա-
գրություններով լի իր սոկեմատյանում հա-
պտամում է արեկոծ իր կյանքի ողջ ողբերգու-
թյունը, որի մեջ արտացոլված են փաստորեն
միջին դարերի հայ ժողովրդական մասսաների
և առաջին հերթին քաղաքային սղերտի գաժան
չարակրությունները, աղբումներն ու արամա-
գրությունները, երազներն ու հուսախաբու-
թյունները:

Սակայն փրկիլը գտնված չէ սոսկ բախտակից
մասսաների մտաշխարհին: Նրա միտքը բարձ-
րանում է այդ հարթավայրից ավելի վեր, ար-
ձագանքում իրեն հախընթաց մեծ քերթողնե-
րին: Նթև զղջումի ու բարոյագաման իր մոախի-
ներով, առածուն հասցեագրված իր գիմումնե-
րով փրկիլը քայլում էր մի շավղով, որի վրա
նրանից առաջ ոտք էր դրել Նարեկացին, ապա իր
ժողովրդասիրությամբ, ֆեոդալական գաժանու-
թյունների և կեղեքումների նշավակումով, իրա-
վունքի և արդարության հաղթանակի տենչով
հա հիշեցնում է Նիզամուն: Նրա իմաստասիր-

բությունը երևույթների անցավորության մասին, նրա բազմաբնույթ ճակատագրի գեմ, նրա կրոնական սկիզբիցիվմը կամ իրոնիան կրոնափորների հասցեին՝ արձագանքում են ըստ էության թաքանիլին: Նախասահմանության մասին ունեցած նրա հայացքը, ժողովուրդների բարեկամության նրա իրկալը, բանականության և շնորհքի նրա մեծարանքը և խոր մարդասիրությունը համահնչուն են Ռուսթավելուն: Ծանոթ էր Ֆրիկը սրանց գործերին. այդ չէ էականը, այլ այն, ինչ փաստապես մերձեցնում է նրան գրանց և միաժամանակ այն, ինչ տարբերակում է նրան գրանցից:

Ֆրիկը չունի մեծ այդ նախորդներից ոմանց մոնումենտալ մտահղացումներն ու սյուժետային նրբին ու շքեղ հյուսվածքները, նրանց պլաստիկ կերպարներն ու հերոսական բնավորությունները, ասպետական պատվի, սիրո ու հավատարմության նրանց պաշտամունքը: Բայց սրքան գիպուկ է ու հարուստ նրա բնութագրած հասարակական հակասությունների պատկերը, սրքան անմիջական ու խոր նրա անձնական սցրերգությունը, սրքան վճռական ու նշանակալից նրա շրջադարձը գեղի ճնշված ու հարստահարված ժողովրդական խավերը, նրա գեմոկրատական ազատասիրությունն ու հավասարությունը, նրա ըմբոստացումը բառնցքի ու

կեղեքումների խշխանության գեմ, նրա տխուհական մենամարտը ֆալաք-աստծու հետ:

Նրա մեզ հասած քերթվածքները ուրույն սպրումների ու խոհերի արդյունք են: Նրա ներքնաշխարհը գրեհորոզ գծագրություններն ու ներկերը, կենդանի ու աշխույժ, ժողովրդական լեզվին մոտեցող խոսքի վարպետությունը արտացոլում են հեղինակի խոր լմաստասիրությունը և վերարտադրում հակասություններով ու բախումներով լի պատմական նրա պարազրջանի հարստատ պատկերը:



ԱՇՈՏ ԳԱՐԵԳԻՆԻ ՀՈՎԿԱՆՆԻՍՅԱՆ
«ՖՐԻԿԸ ՊԱՏՄԱՔՆՆԱԿԱՆ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ»

Պատ. խմբագիր Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ
Հրատ. խմբագիր Հ. Մ. ԷԼԶԻՔԵԿՅԱՆ
Տեխ. խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Կոնտրոլ սրբադրիչ Ա. Գ. ԱՐՉԱՔԱՆՅԱՆ

ՎՋ 12135 իՂԽ 292 Հրատ. 1189 Պատվեր 216 Տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 25/V/ 1955 թ., ստորագրված է
տպագրության 13/V/ 1955 թ., Ց, 5 հրատ. մամուլ, 3, 8 տպ. մամ.:
Գինը 2 ս. 90 կ.

Հայկական ՍՍՏ ԳՍ. Հրատ. տպարան, Երևան, Արտվյան 124:


ԳԱՆ Հիմնարար գիտ. գրադ.



FL0042730

[294]

ԳԻՆԸ 2 Ռ. 90 Կ.



6613